

ՀՈՎՀ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՊՐԱԿ 4.

1. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐՅԱՆ
2. ԱՎԵՏԻՔ ԻՍԱՅԱԿՅԱՆ
3. ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

КНИГА ДОЛЖНА БЫТЬ  
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗДНЕ  
УКАЗАННОГО ЗДЕСЬ СРОКА

Колич. пред. выдач \_\_\_\_\_ Зак. №

89

7-20 - книга

Чулбірт нау әршін  
чулбірт жаңыру - әршін 7.

812		478
93	1257	809

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ՀԵԽԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՑՈՒՏ

891.99.09

Դ - 36

ԱՅԼԻԳԱՅԻ Է 1961 թ.


Զեռագրի իրավունքով

ՀՊՎՀ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՀՀՀՀՀ  
A 31097

ՊՐԱԿ Գ.



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՀԵԽԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՑՈՒՏ

ԵԲԵԿ.ԱՆ - 1947

На правах рукописи

О. ГАНАЛАНЯН

МАТЕРИАЛЫ ПО АРМЯНСКОЙ  
ЛИТЕРАТУРЕ

Вып. IV.

(На армянском языке)

Изд. Гос. Заочного Пед. Института Арм. ССР

Ереван—1947

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐՅԱՆ

REFUGEE ASYLUM

## ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԱՏՈՒՐՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ

«Մեր գըտկան աշխատավորների մեջ գժվար է գտնել մի ու-  
տիւին, որի կյանքը ավելի սրտառուչ ու տխուր էջեր պարունակեր,  
որի կյանքը ավելի դառն ու տանջալից օրերից հյուսված լիներ, քան  
Ալեքսանդր Շատուրյանինը»\*, կարդում ենք Վ. Տերյանի Շատուր-  
յանի մասին գրած կենսագրական նոթերում: Եվ իսկապես կարիքի  
ծովում հեղձամղձուկ եղած Շատուրյանի կյանքի դրվագները, այդ  
են ապացուցում:

Բանաստեղծ Ա. Շատուրյանը ծնվել է Զաքաթալայում 1865  
թվին: Նրա հայրը մի աղքատ ձկնավաճառ է եղել: Տակավին երեք  
տարեկան էր Ալեքսանդրը, երբ մեռնում է հայրը, Շատուրյանի մոր  
ասելով՝ «Հայրը որ մեռավ, բարձի տակ յոթը կոպեկ սև փող կար  
միայն...» Զկնավաճառ Սափարյանը, որ Ալեքսանդրի կնքահայրն էր,  
խղճալով, անհաց ու անօթելվան մնացած յուր սանիկին և նրա մորը  
տեղափորում է իր մի հին տնակում: «Մորս հետ ալլում էինք կի-  
սախարխում այդ տնակում, ասում է պոտը, շաքաթը մի անգամ  
հազիվ էր մեր բուխարին կրակի երես տեսնում... տաք կերակուր  
միայն կիրակի օրերն էինք ուտում...»: Սրա նրա տանը լվացք ու  
կար անելով է պահել մայրը իր մինուճար Ալեքսանդրին: Դպրոցա-  
կան հասակի երեխա դառնալով՝ մայրը յուր որդուն ընդունել է տա-  
լիս Զաքաթալայի ծխական դպրոցը, ապա տեղափոխում տեղի քա-  
ղաքային ուսումնարանը: Տակավին 12 տարեկան հասակից Ալեք-  
սանդրը ստիպված աշխատանքի էմտնուում Զաքաթալայի փոստատանը,  
ուր ցրիչի պարտականություն էր կատարում, միաժամանակ «աղատ  
ժամերին» սպասավորություն անում եկեղեցում, ինչպես նաև օգնում  
սափրիչ քեռուն: Յուր որդու համար քիչ թե շատ նյութական տա-  
նելի պայմաններ ստեղծելու դիտավորությամբ մայրը ամուսնուում  
է Զաքաթալա եկած մի թիֆլիսեցի մրգավաճառի հետ, որը շատ շու-  
տով լքում է Ալեքսանդրի մորը և փախչում Թիֆլիս: Բանաստեղծի  
ինքնակենսապրությանից իմանում ենք, որ այդ խորթ հայրը կա-  
տարյալ մի հրեշ է եղել և պատճառ դարձել նրա մոր վաղաժամ  
մահվան:

\* «Խորհրդային գրականություն», 1937 թ. № 1, էջ 282, «Վահան Տերյանի  
գիր ձեռագիրը».

« և նորթ հայրս պարապում էր «խմելաբանությամբ». մորս անարգելով տանջում էր, ինձ էլ ձեռն ընկած ժամանակ ծիծումք: Հոր պակասը լրացնում էր քեռին... Մեկն անզութ էր, մյուսը հարբան... Տակավին դպրոցը չափարասած մեռնում է պոետի մայրը անօգնական ու անապավեն թողնելով Ալեքսանդրին: «Մայրս վշտի, առնջանքի ձեռից մեռավ, ես էլ մնացի խորթ հորս ճանկերում, ինչպես գորտը օձի բերանում, ես էլ մորս հացը կուտեի, եթե այդ միջոցին Աստված Զաքաթալային չխղճար և Ազապյանին ուսուցիչ չուղարկեր մեզ մոտ Նրա հոդին լույս դառնա, նա էր, որ կարճ միջոցում կյանք, շարժում գցեց հասարակության մեջ... Նրա սուր աչքը նկատեց, որ մեջս շնորհք կա, աեղեկություն ժողովելով իմ մասին, մեծ եղրոր պես կարեկցեց ու խորթ հորս ձեսից խելով, վերցրեց 1881 թվին հետը բերեց Թիֆլիս»:

Թիֆլիսում Ծատուրյանը փորձում է ընդունվել ներսիսյան գպրոցը, բայց մերժում է ստանում մեծահասակ լինելու՝ ինչպես նաև ընդունելության քննությունները լավ հանձնել չկարողանալու պատճառով: Թիֆլիս գալու առաջին ամիսները Ծատուրյանը ապաստան է գտնում Ազապյանի մոտ, որը սակայն շուտով ստիպված հեռանում է Թիֆլիսից: «Նա էլ որը օրում մեծացած, անապահով մարդ էր, չկարողացավ Թիֆլիսում մնալ, հետացավ գալու, ես մնացի շվարած... պանդուխտ պատանի, անտունանտեր, կես քաղցած, կես-ծարավ սկսում եմ քաշ դալ Թիֆլիսում՝ մի որևէ դպրոց մանելու ջերմ հույսով ու փափառվով: Բավական ժամանակ անօթեան ու անհաց Թիֆլիսում գեղերելուց հետո իր հոր բարեկամներից մեկի խորհրդավոր Ծատուրյանը գնում է Դարայավի կողմերը մշակության. ոտու ձեռ պնդացնելով մի գրչահատ գրպանս դրած գնացի խառնվեցի մշակներին և բանեցի. ճանապարհ էին շինում, իմ չար բախտից աչքս բաց արի ու խորթ հորս տեսա բանվորների մեջ. այդ վայրեկյանին օրս խավարեց, նա հայտնելով, որ իրա որդին եմ, իրավունք համարեց ծրագարձու իրա գրպանը ածել և ափում, հարբում էր, ինձ թողնում բրդիկ ծունկս բաց: Ամիս ու կես սովոր, ծարավ համբերեցի նրա ճանկերում. լացիս պաղատանքիս ուշ չեր դարձնում, որ իմ վաստակից մի փշուր ինձ տա: Երբ մի օր էլ հարբած միջոցին իմ աղաշանքին հայհոյանքով պատասխանեց ու վրա ընկավ որ խփի, հուսահատությունից էլ չկարողացած համբերել սրածայր գրչահատ խրեցի նրա ազդը ու գլուխս առնելով փախա զեսլի Թիֆլիս: Թիֆլիսում Ծատուրյանը մի մրգավաճառի մոտ գործակատար է դառնում, բայց կարճ ժամանակից վտարվում է լրադիր կարգալու համար Անգործ չնալու համար Ծատուրյանը ուղենորդվում է Մանզիս, մի գինեվաճառի շղախիքարը գառնում և աղատ ժամերին գրական աշխատանքով պարապում լրագրական հոդվածներ գրելով այս ու այն թերթերին: Մի քանի ամսից հետո Ծատուրյանը նորից է գալիս Թիֆլիս:

վերստին ուսումը շարունակելու ցանկությամբ, և սակայն նրա ձըգ-  
տումներն այս անդամ էլ իդերեւ են ենում: Ուսուցչական ինստիտու-  
տում ընդունելության քննությունները տալու ժամանակ կտրվում է  
ուսուցած լեզվի գրավորից:

Անտուն ու անոթի Թիֆլիսի փողոցներում շրջելիս Ծատուրյանն  
անսպասի կերպով հանդիպում է իր հին բարերար Ազապյանին:  
Վերջինս Հավաքարի փողոցներից մեկում հանդիպելով Ծատուրյանին:  
Կինառների հետ կոճի խաղալիս, հանդիմանում է Ալեքսանդրին, հայ-  
րաբար բռնում՝ ձեռքից և տանում, ընդունել տալիս Թիֆլիսի ար-  
հեստավորաց դպրոցը: Այստեղ Ծատուրյանը իր կրոնի ուսուցիչ՝ Ար-  
սեն Բագրատունու շնորհիվ ամսական 10 ռուբլի թոշակ ստանալով ե-  
վիճակի է լինում ստեղծված տանելի պայմանների շնորհիվ պարա-  
պել իր սիրած գրականությամբ: Արհեստավորած դպրոցում Ծատուր-  
յանի գասընկերներից է լինում Նարեկուը: Այստեղ է, որ նա մո-  
տիկից ծանոթանում և նաև տաղանդավոր նկարիչ Բաշինջայյանին:  
Արհեստավորաց դպրոցում եղած ժամանակ է, որ Ծատուրյանը տպա-  
գրում է իր բանաստեղծական երախայրիքը մի թարգմանական երգ,  
որ տպվեց «Աղբյուր»-ում: Իդեպ այդ երգը շատ գուր է գալիս Բագ-  
րատին: Արհեստագիտական դպրոցում սակայն երկար չի մնում տպա-  
գա բանաստեղծը. 1885 թվին էր, որ նա ուղեկորվեց Եջմիածին Գե-  
վորդյան ճեմարանը ընդունվելու նպատակով: «Ամբողջ 8 օր՝ առա-  
վոտյան ժամը 9-ից մինչև 2-ը սիրողի դրանը չորանում էի՞ ան-  
համբեր սպասելով ինդիս պատասխանին: «Վաղին արի, վաղն արի»:  
միշտ հենց այս էի լսում յուրաքանչյուր եպիսկոպոսի բերանից: Ես-  
նոր հասկացա, որ ուսուները իրենց սիրելի „զատրա“-ն հայերենից են-  
թարգմանել, վերջապես երկարաժամկետ լուսությունից հետո, 9-րդ օրը սի-  
նողականները հետեւյալ պատասխանը տվին, «Զենք կարող ընդունելու-  
հուսալքված ու մերժված պոետը վերադառնում է երեան: հացի փող-  
չունենալու պատճառով ստիպված ծախում է իր գրքերը և մի քանի  
օր գոյությունը պահպանելուց հետո մի փոքրիկ գումար է ստանում:  
ընկերներից և ուղեկորվում Թիֆլիս: Այստեղ Ծատուրյանը ավելի  
հաճախ է սկսում թղթակցել հայ թերթերին: 1887 թվին էր, որ  
Տիգրան Նազարյանի հանձնարարական գրությամբ Ծատուրյանը ու-  
ղերձում է Նիժնի Նովգորոդ մի հարուստ հայ վաճառականի մոտ,  
որպես նրա զավակների մայրենի լեզվի ուսուցիչ: Կարճ ժամանակից-  
հետո Ծատուրյանը այդ հայ վաճառականի ընտանիքի հետ տեղա-  
փոխվում է Մոսկվայում Ծատուրյանը շուտով անցնում է  
նոր աշխատանքի ժամանարյանի բանկում: Մոսկովյան կյանքի այս  
տարիներին Ծատուրյանը ծանոթանում է այնտեղի հայ ուսանողնե-  
րին՝ ինչպես նաև ամրապնդում իր բարեկամական կապերը Շահագի-  
պի հետ, որին ծանոթացել էր նիժնի նովգորոդի մոտ գտնվող կարիա-  
կյուղում: Շփկելով գրական մարդկանց միջավայրում, Ծատուրյանը

Կոր Միցք է ստանում իրեւ ստեղծագործող: Այդ շրջանից նա դառնում է «Մուլը»-ի, «Տարապ»-ի, «Աղբյուր»-ի և այլ հանդեսների աշխարհի ընկնող գրական աշխատակիցը: 1891 թվին էր, որ Ծատուրյանը Մոսկվայում լույս է ընծայում իր բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն: Յոթ տարի անց, 1898 թվին լույս է տեսնում պոեմի երգերի երկրորդ գիրքը ևս, իսկ 1901 թվին նաև «Գրչի հանաքները»: Իր ստեղծագործական կյանքի հետագա տարիներին Ծատուրյանը հարստացնում է հայ թարգմանական գրականությունը լույս ընծայելով իր «Ընուս բանաստեղծներ» թարգմանական երգերի գիրքը: Պետք է նկատել որ Ծատուրյանը իր գրական փառքի գաղաթին հասավ սեփական ճակատի քրտինքով: «Ի՞նչ որ արել եմ, ամբողջապես պարտական եմ ինքս ինձ և այն համառ կովին, որ մզել եմ և մղում եմ կյանքի չարաբաստիկ պայմանների դեմ», —ասում է Ծատուրյանը: Նյութական ծայրահեղ անապահով վիճակը, որի հետեւանքով նա կողմնակի աշխատանքներ էր անում, մեծ չափով արգելակել է պոետին գլխովին նվիրվելու ստեղծագործական աշխատանքներին: Այդ հանգամանքը շատ հաջող կերպով ցուցազրված է Վարդգես Սուրենյանի հիմքայլ ընկերական շարժի մեջ: Ծատուրյանը նստած պետքանի վրա ուզում է պառնաս ոլանալ, բայց ուսից կախված համբիչը արգելակում է նրան: Պետք է նկատել սակայն, որ իր կյանքի վերջին շրջանում Ծատուրյանը փոքր ի շատեւ նյութական տանելի պայմաններ ուներ շնորհիվ արժանահիշատակ վերա հախվերդյանին, որը հնարավոր պայմաններ ստեղծեց նրա համար, ցրելով կարիքի սև պամպը պոետի ճակատից: Ծատուրյանը մեռալ 1917 թվին Թիֆլիսում և թաղվեց Խոջեվանքի գերեզմանատանը, հայ գործիչների այդ պանթեոնում:

## ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՆ

Ալեքսանդր Ծատուրյանը գրել է տակալին պատանի հասակից, Նրա առաջին տպագիր ուսանավորը Շիլերի «Մանուկն օրորոցում» քանաստեղծության թարգմանությունն է, որ լույս տեսավ 1886 թ. «Աղբյուր»-ում, բայց Ծատուրյանը ճանաչված բանաստեղծ դարձավ, Կըր 1891 թվին Մոսկվայում լույս ընծայեց իր բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն: Յուր գրական ուսուցիչների՝ Պատկանյանի և Շահազիզի նման Ծատուրյանը հիմնականում քաղաքացիական մոտիվների երգիչ է, «Նախ քաղաքացի և ապա պոետ ակզբունքին» գավանել և նա: Սակայն Ծատուրյանի ստեղծագործություններում որոշակի տեղ են զրավում նաև «ինտիմ երգեր»-ը: Նրա քնարի լարերից իջել են սիրո, բնության մեղեդիները ևս, հանգամանք, որ նրա քնարը ավելի բազմաշար է զարձնում, քան նրա ուսուցիչներինը, Շահազիզինը, բայց մանավանդ Պատկանյանինը,

որի մոտ սիրո և բնության երգերը, եթե չասենք բոլորովին, ապա շատ անշան տեղ են գրավում:

Ինչպես նկատեցինք, Ծատուրյանը ևս հիմնականում ընթանառվ Պատկանյանի և Շահնազիդի հետքով, մեր գրականության մեջ հայտնի է որպես «ազգային վշտի» երգի: «Իմ ուխտը» երգում, որով նա բաց է անում իր երգերի գիրքը, պուտն այն միտքն է հայտնի, որ ինքը «սուլք ճշմարտության զրոշակը ձեռքին», անկաշառ քնարով պիտի երգի լույս ու աղատություն, առանց վախենալու այդ քանի համար սպասվող հալածանքներից: Բանաստեղծը, մանավանդ քաղաքացիական վշտի երգիչը, պետք է ծառայի ժողովրդի բարորության զործին: «Պոետին» հայտնի երգում, գրված Պուշկինի „Չերք“ տանավորի առթիվ, Ծատուրյանը կոչ է անում բանաստեղծին ծառայել ժողովրդին, երգել «ամբոխի» սրտին մոտ երգեր, լինել նրա վշտերի թարգմանը, և ոչ թե մեկուսանալ և բարձրից նայել անդեռ ամբոխին, հնչեցնելով վերջինիս հոգուն խորթ երգեր.

Պոետ դու հպարտ, սեղ արծվի նման,

Բարձրից մի նայիլ տըգետ ամբոխին:

Եվ կծու երգով մի ծաղրիր նորան

Շանթեր մի թափիր խղճուկի գըլին:

• •

Երգիր նորան լույս, բարիքներ ուսման,

Եղիր ամբոխին ուսուցիչ-ընկեր

• •

Դու ույժ ներշնչիր նորան քո երգով

Խավարի կապանք անվախ վշտերու...

Գրական ասպարեզ իշնելով մի այնպիսի ժամանակաշրջանում (1890—1900—1910), երբ հայ ժողովուրդը հեծում էր ցարիզմի և սուլթանիզմի լծի ներքո, բնականարար ազգային վշտի երգչի քնարը, «Ազգի վշտին է արձագանք տալիս» (տես «Սիրելի ընկեր» և այլ երգերը):

Իր հոգու աչքերն հառելով «Տիրության հովիտ» Արևմտահայտանանի կողմը, Ծատուրյանը սրտի թառանչքով բացականչում է.

«Արևելքի արյունաթոր նահատակ,

Դու հեծում ես, դու կոծում ես

Քեզ այրում են աղատության նպատակ

Օ՛, երբ պիտի շողաս, հայի արեգակ»:

Ծատուրյանի հայրենասիրական երգերը ընդհանուր առմամբ թախծի շեշտեր ունեն և գա հասկանալի է ըստինքյան: «Սգո օրերը» ծննել էին սգո երգեր»:

«Տառապանքի երգերից» երգաշարում, ինչպես մի ժամանակ Պատկանյանը լիր «Կարինի կոտորածը» և նման ոտանավորներում

Ծատուրյանը ևս ողբում է թքքական հորդաների կողմից հրի ու սրի մատնած հայկական զյուղերն ու շները: «Զեյթունի հրդեհը» երգում լսելի է պոետի օգնության կանչող աղեկառը ձայնը:

Այլրվում է Զեյթուն... օգնեցեք, հայեր,  
Դառն է ճգնաժամ, տխուր է վայրկյան,  
Օհ, մեր հարազատ եղբայրք ու քույրեր  
Անտուն անտեր են հասեք օգնության:

Ծատուրյանի պոեմիայում արձագանք է գտել նաև 1893—94թ.թ. Սասունի կոտորածը, այդ թվերին էր, որ Սասոն լեռներում ծայր էին առել հայ-քրդական բնդարութիւնները, որին հետեւցին սասունցիների ըմբռատացութիւնը սուլթանի կառավարության դեմ: Սասունցիները բացե ի բաց հրաժարվեցին հարկ տալ Թուրքիային, ուստի Արդուլ Համիդը Զեքի փաշացի հրամանասարությամբ Սասուն է ուղարկում չորրորդ բանակը, խատագույն հրաման արձակելով ռոշինչ և ոչ ոքի չինայելու: Ակսմում է արյունուռշտ հորդաների եղեննի կոտորածները, 27 հայ զյուղեր հրի ու սրի ճարակ ենդառնում: Սասունցիներն անօրինակ սխրագութություններ էին կատարում այդ անհավասար պայքարում, որի ձայնը կայծակի արագությամբ տարածվում է բոլվանդակ հայության մեջ: Այդ գեղքերի անմիջական ազդեցության տակ է եղիրեգիված Ծատուրյանի «Հայմայրերին» խորագիրը կըող բանաստեղծությունը, որը հնչում է այսպիս:

Մի լաք մայրեր, դուք երջանի՛կ  
Եվ անման եք, ու ազգին  
Պարզեցիք հերսն որդիք  
Փառք չի հասնիլ Զեր փառքին...

Ծատուրյանի այս տողերը հիշեցնում են հելլեն մայրերի, հայրենիքի համար նահատակված, իրենց զավակների մասին ասված այս խոսքերը. «Հենց դրա համար ծննդինք»: Ժամանակակից ու ականատես լինելով հայ ժողովրդի կրած ահավոր տառապանքներին, Ծատուրյանը, ինչպես Հովհաննիսյանն իր «Նոր գարուն» բանաստեղծության մեջ, «Կատրած սրտով» երգեց բնության զարթոնքը, գարնան գալը, որովհետեւ նոր գարունը «լաց ու արյուն» էր միայն բերում հայ երկրին:

Ա՛խ, ինչ սրտով երգեմ հիմիկ,  
Քեզ ի՞նչ սրտով ողջունեմ,  
Փուշ են դառել վարդ ու ծաղիկ,  
Ել հս ուրախ երդ չունեմ,  
Մեր առւն ու աեղն-հող, ավերակ,  
Մեր լույս-օրերն խավարել  
Մեր հույսերը ու մոխրի տակ,

Մեր դարդեռը ծով դառել...  
 Ամպ ու թուխալ է եկել պատել  
 Հայ եղբօրս սև կյանքին.  
 Երկար լալուց արցունքն հատել  
 Ել վերջ չըկա տանջանքին...  
 Սիրուն զարուն, կանաչ գարուն,  
 Քեզ թնչ սրտով ողջունեմ...  
 Դու մեղ բերիր լաց ու արյուն—  
 Ել ես ուրախ երգ չունեմ:

Ծատուրյանի էլեղիկ տրամադրություններ հարուցող այս բառ  
 ցարոիկ սիրուն «Երգ» ստանավորում արված է «Զարկված» ու զրկված»  
 մեր ժողովրդի և նրա բազմաչուրչար հայրենիքի վիճակը:

Պետք է նկատել սակայն, որ Ծատուրյանը անհուսալի թախծեր-  
 գակ չի գառնում իր այս կարգի երգերով: Պատկանյանի նման թե՛  
 նրանից ավելի մեղմ շեշտով, Ծատուրյանն էլ զիտե ազգային ազա-  
 տագրական պայքարի ոգեկոչել մեր ժողովրդին: «Զինվորի երգը»  
 ստանավորում ուղմի կարոտ բազեի նման հայ մարտիկը ձայնում է:

Թումիր, իմ նժույգ, սլոցիր շուտով  
 Տուր թնձ ցանկալի կավի փոթորիկ  
 Կովի մեջ միշայն ես արյան գընով  
 Կըփրկեմ իմ խեղճ, ստրուկ հայրենիք:

Կըավորմկանության բացակայությունը և հավատը հայ ժողո-  
 վրդի բախտողու ապազայի նկատմամբ լավատես է դարձնում պոե-  
 տին:

Դարերով անբախտ, դարերով թշշվառ,  
 Իմ խեղճ եղբայր, զու մի վհատիր...

Այս լովատեսությունը քանի գնում այնքան ավելի խորը հա-  
 մոզմունք է դառնում պոետի միջ, որն իր զրական արտահայտու-  
 թյունն է սփանում նաև Գիտակի ստանավորում, Բարձրարվեստ այդ-  
 երգում սիմվոլիկ ձեռով պոետն այն միտքն է հայտնում, թե ժանտ-  
 ձմուն կապանքից (որ է սուլթանիզմն ու ցարիզմը) շուտով ազա-  
 կարձակվի գետակը, երբ գա գարունը, սիմվոլիկ արտահայտությունը  
 ազատության:

Քիչ էլ լացիր գետակ վճիտ, կարկաչուն,  
 Դաժան ձմռան ցուրտ կապանքը կտրելով,  
 Քիչ էլ քիչ էլ... և ուր որ է վառ գարուն  
 Նոր կյանք կըտա՞ք քո լաց-սուտին վերջ տալով:

Ինչպես մի ժամանակ Պատկանյանը իր հայրենասիրական-  
 ստեղծագործություններում սիրում էր հայ ժողովրդի տիտուր ներկա-

Հին հակադրել նրա փառավոր անցյալը, այնպես էլ Ծատուրյանը  
տիտուր ներկայից մտքով փախազրվում էր այն ժամանակները, երբ  
«հաղթանակի դափնիներ էր շողում հայ հայրենիքի գլխին»:

Գլխիս հաղթանքի շողում էր դափնիք

Միշտ երգ ու նվագ, սեր ու խնդրություն  
իմ պալատներում, իմ խրճիթներում:

Ներքողելով պատմական անցյալը, Ծատուրյանը, սակայն, ետ  
զեպի այդ անցյալը չէր կոչում, այլ ապագայի համար օրինակ էր  
ժառայեցնում ազատ անշղթա անցյուլ հայրենիքի փառքը:

Լինելով ջերմ հայրենասեր, Ծատուրյանը արհամարհնանքով չի  
ցցված այլ ժողովուրդների նկատմամբ. նրա զոեղիայում ոչ մի  
հատիկ վիրապորական խոռք չկա հարևան ժողովուրդների հասցեին  
ասված: Շատ բնորոշ է նրա Պետչեկից կատարած մի թարգմանական  
երգն այդ տեսակետից, ուր կարդում ենք.

Ես սիրում եմ իմ հայրենիք, սիրում խորին ջերմ սիրով,  
եվ ողջ հոգով նրան հավերժ բախտ, արև եմ վափագում,  
Բայց և օտար, խեղճ ազգերին ես չեմ նայում ատելով,  
Թշնամությունն ինձ օտար է, նա տեղ չունի իմ կրծքում:

Ինչպես տեսնում ենք, բացի մեզմ պոետական խառնվածքից,  
յուր հայրենասիրական երգերի այս կողմով էլ Ծատուրյանը տարբեր-  
վում է իր ուսուցեցիներից՝ Շահազիզից, բայց մանավանդ Պատկան-  
յանից: Հայ ժողովրդի վերածնունդն ու նրա բախտորոշ ապագան  
երազող պոետը յուր գրական գործունեության վերջին շրջանում  
ավելի լայն հայացք է հանդես բերում վերսնիշյալ հարցերի  
նկատմամբ: Նրան արդեն մտահոգում է հչ միայն հայության, այլև  
մնացած ժողովուրդների երջանկարեր ապագայի հարցը. «Բազմազգ  
ժողովուրդները կուզեր որ կազմեն ազատ ու մեծազոր մի ընտա-  
նիք», ահա թե ինչի է ձգտում Ծատուրյանը:

\*  
\*   \*

Լինելով աշխատավորական, գեմոկրատական խավերի գրական  
դաղափարախոսը Ծատուրյանն իր «Հեղ մուսայով և անկեղծ երգով»  
փառաբանել է հողի ազնիվ աշխատավորին, անխոնջ «Սերմացանին»  
ևս «Փառք և երանի տալով նրանց, որ դաշտն հայրենի չեն թողնում  
խոսլանան»: Ծատուրյանը Մուրացանի նման այն կարծիքին է, որ քա-  
ղաքներին կենդանություն տփողը, ազգի հիմքն ու նեցուկը դյուլա-  
ցին է: «Երկրի մշակներ»-ը բանաստեղծության մեջ այսպես է ներ-  
բողում պոետը «քարից, հողից հաց քամող» մշակներին:

Օ՛, հայրենիքիս քըտնաջան ողզիք,  
Որքան համբերող, քաջ է ձեր հոգին,  
Զեղնով է միայն կանգուն հայրենիք  
Համբույր ու օրհնանք ձեր սուրբ վաստակին:

Ծատուրյանի այս կարգի բանաստեղծություններում հանդեռ  
եկող զյուղացին Հովհաննիսյանի «Հատիկ»-ի և Աղայանի «Սերմանա-  
ցանի» նման կախումն ունի բնությունից և այդ պատճառով աղո-  
թող է ու միտուիկ: Անա թե ինչպիսի թախանձանքով է զիմում Ծա-  
տուրյանի երգում հանգես եկող զյուղացին առ աստված, ամպ ու  
թիւղով պատաժ երկնքին նայելիս:

Ա՛յ սև ամպեր, վայ սև ամպեր,  
Սիրտս պատեց սև ու մութ,  
Յարաբ ինչ եք դուք ինձ բերում,  
Դարնան անձրկ՝ թե կարկուտ...  
Հուսով-լուսով արտ եմ ցաներ,  
Արյուն թափել ու քրորինք,  
Ողջ սուրբերին մոմ եմ վառել,  
Աղոթք արել, որ երկինք  
Արտիս նայի, տունս խնայի,  
Որ տա, կյանք, տա իմ հացին,  
Վայ բալեքիս... Աստված չանի,  
Թե որ անհաց մընացին...

Ուշագրավ է, որ Ծատուրյանի այս երգում, ինչպես և Հովհան-  
նիսյանի «Հատիկ»-ում հանգես եկող զյուղացու բերանից լսելի չէ:  
տրառւնջը և բողոքը զյուղական հարստահարիչների դեմ, այն ինչ  
տեսնում ենք Թումանյանի «Գությանի երգ»-ում:

Մի կողմից բնության արբերքը, երաշտն ու կարկուտը, մյուս  
կողմից գղիրն ու ռեսը տանում են զյուղացու ապրուստի միջոցը՝  
քաղցի մատնելով սերմանցանին: Սովամահ չլինելու համար Ծա-  
տուրյանի երգած «Երկրի մշակներ»-ը դիմում են պանդխտության:  
Հովհաննիսյանի, Թումանյանի և Իսահակյանի նման Ծատուրյանն էլ  
երգել է պանդխտությունը: Պոհան ինքն էլ իր երգած պանդուխտնե-  
րից մեկը լինելով խորապես ապրել է տարազիր մարգու հոգեվիճակը:  
Դրա լավագույն գեղարվեստական արտահայտությունն է Ծատուրյա-  
նի «Պանդուխտի երգը», ուր հայրենի հողի ու արեւի անփոխարինելիւ-  
թյան գաղափարն է դրված:

Օտար երկինք, օտար արև,  
Որ շողում եք զլիսիս վերե,  
Ինչքան շողաք... դուք ինձ համար  
Միշտ կըմաք. զէշեր խավար...

Սիրտս առչոր՝ ձեզ նայելով,  
Անտեր, պանդուխտ կյանքս լաւով,  
Օր չի անցնում հայրենիքիս  
Վառ կարոտը չայրի հոգիս  
Մատաղ լինեմ նորա պայծառ  
Են երկնքին, ուր սիրավառ  
Ոսկի արեն ինձ վերեկց  
Փայփայել է մանուկ օրից:

Տարիներ շարունակ բնաշխարհից հեռու լինելով Ծատուրյանը չէր կարող իր ժող. երգերի ողով գրած բանաստեղծություններում այնպիսի հմտությամբ մատենալ ժողովրդական երգի զգալակերպին. որպես Հովհաննիսյանն ու Թումանյանը: Ծատուրյանի ժողովրդական բառ ու բանով ոճավորված այդ կարգի երգերում գրքայնության շորովներ կան: «Հայրենի միջավայրից դուրս լինելը մարդու ականջը խորթացնում է», ձմարտապես նկատում է Ծատուրյանը: «Որոշել եմ Հայկացյան լիզլի բասգիրքը ձեռք բերել այլ և աշխարհաբար ոճերի բառաբանները»: Այդ պատճառով էլ բառաբաններից քաղած ոճերով զարդարված Ծատուրյանի ժող. երգերի ողով գրված բանաստեղծություններում գրքայնության կնիքը ակնբախ է: Ծատուրյանի ստեղծագործություններում հողի հետ կոխվ ափող անխոնջ սերմնացանի հետ լսելի է նաև կապիտալիստական քաղաքի գործարաններում տանջալի աշխատանքի տակ տնօքով լսնվորի ու բանվորունու սոցիալական պայքարի կոչող երգի ձայնը ևս Ստորև բերված երգում բանվորական գնդերի կովի երգն է հյուսում բանվորունին գայրույթի ու վրեժի զգացում սերմանելով իր զավակի հոգում:

Մի լար որդիս, որ չես լսում  
ել մանկական քաղցր օրօր  
ես մեծ կովի երգ եմ հյուսում  
Օրոցքից մոտ ամեն օր...

Աշխատավորական, գեմոկլբատական խավերի երգչի քնարի լարերից լսելի է ոչ միայն հողի հետ կոխվ տփող ու ունայնածեռն նստող երկը մշակների, հարստահարվող պրոլետարիատի հեծեծանքը, այլև ծովի ալիքների հետ մարտնչող ու այդ կերպ յուր հանսապազորյա հացը վաստակող անվեներ ձկնորսի խիզախ նավավարի մասին հյուսված երգը: Ծատուրյանի համանուն բանաստեղծությունը նրա հաջողված երգերից մեկն է: «Նավաբար»ը հնչյուններով նկատված մի բնանկար է: Երգի առաջին մասում պատկերվում է ձկնորսն իր նավակով փոթորեկց առաջ ծով գուրս գալիս, երբ սև ամպերը գանդաղ սկսում են վեր բարձրանալ: Դիմամիկ պատկերներով տրված է հորեղոնը մթով պատող սև ամպերի շարքը երկինը բարձրանալիս, և վերջապես ծովը փոթորկի նախօրյակին աստիճանաբար իր պարզած

«Երեսը կհնձռոտելիու երգի երկրորդ մասը նավավարի տված պատառ-  
խանն է իր աղային, Կյանքը լավ է, բայց և մահից չպետք է փախ-  
չել. մահը անխուսափելի անհրաժեշտություն է: Այս միտքն է հայտ-  
նում նա: Ծատուրյանի այս բանաստեղծությունը զետեղված է նրա  
«Խրիմի Ալբոմից» խորագիրը կրող երգաշարի մեջ: Իր երգերի այս  
ցիկով Ծատուրյանը հանդես է գալիս որպես առաջին ծովանկարիչը  
մեր պոեզիայի մեջ: «Ծովի վերա» երգով պոետը բաց է անում «Խրի-  
մի Ալբոմից» երգաշարը. ծովը աղատության սիմվոլիկ արտահայ-  
տությունն է հանդիսանում Ծատուրյանի այդ կարգի երգերում:

Ողջնեյն քեզ, այ ծով, գու ազատ տարերք  
Առաջին տնզամ տեսնում իմ ևս քեզ:

Ծովը Ծատուրյանի ստեղծագործություններում նկարված է  
տարբեր կողմերից, տարբեր ժամանակ: «Գիշեր» երգում պատկերված  
է ծովը ուշ երեկոյան, իսկ «Ալեկոծ ծովը» երգում, որ մի խորհ է,  
պոետը հարցում է անում ծովին իմանալու նրա հուզման պատճառը:  
Հուզված է ծովը, բայց ինչնու, անմեղ զոհերին խեղզելու պատճառը,  
թե՛ նորանոր զոհեր է ուզում ու չի գտնում: «Ծով և ժայռեր» բա-  
նաստեղծության մեջ ժայռերը անզգայության, անտարբերության  
սիմվոլիկ արաւահայտություններն են հանդիսանում, ժայռն անհա-  
ղորդ է և անտարբեր ծովի հուզմունքն իմանալու խնդրում: Ինչպես  
յուրաքանչյուր գեղարվեստական ստեղծագործություն, այնպես էլ  
Ծատուրյանի այս երգերը բազմանշանակ են Ոմանք կարող են մեկ-  
նել, թե ժայռը սիմվոլիկ տրասհայտություն է անտարբերության,  
անզգայնության իսկ հուզված ծովը զգայուն մարդու հուզված ներ-  
աշխարհի արտահայտություն է: Որոշ բանաստեղծություններում  
Ծատուրյանը ինքն է բացահայտում ընթերցողին երգի սիմվոլները.  
օրինակ՝ այս երգում ծովը կյանքի սիմվոլն է.

Կյանքը ծով է... և վայ նորան,  
Ով չէ այնտեղ կազմապարասու,  
Ով չունի զեկը, չունի կայան,  
Փարոս, խարիսխ առագաստ...

«Երկու փոթորկի» ոտանավորում պատկերված է ծովը տարերքի,  
փոթորկի մեջ: Երգի բուն իմաստը ամփոփված է բանաստեղծության  
վերջին մասում: Փոթորկված ծովը համեմատության օբեկտ է հան-  
գիսանում արևմտահայ կյանքի: Ինչպես որ իրական ծովն է փոթոր-  
կած, այնպես էլ արյան փոթորկու ծով է դարձել արևմտահայերի  
կյանքը: «Հոգիս մռայլ» բանաստեղծության մեջ ծովը հանդիսանում է  
պոետի վշտերի ամոքիչը:—

Հոգիս մռայլ, մռայլ իմ երգ,  
ել սիրո չըկա տանջվելու...

Դուրս և եկել ծովի եղերք

Դարդս ծովին պատմելու

Պետք է նկատել, որ յուր անձնական ավրումները քնարեգիւմ  
և ծատուրյանը սիրում է լայն չափերով օգտագործել ծովի  
պատկերը որպես համեմատության, կամ հակագրության օբեկտ յուր  
ավրումների.

Կար ժամանակ—սերս ծով էր,

Սիրոս խաղուն մի նավակ,

Սիրո ծովում նա լողում էր,

Հառաջ սահում համարձակ:

Սիրո խնդրում կըած ձախողությունները նույնպես պոետն ար-  
տահայտում է ծովի պատկերով:

Պղարվեցավ ծովը սիրուս,

Փշրվեց իմ սիրո—իմ նավակ,

Հանգավ փարոս չկաս դու,

Դարձյալ ես որբ, ես մենակ...

Սակայն սերը Ծատուրյանի մոտ դիտվում է իբրև կյանքի աղ-  
բյուր, Այդ միտքն է նա զարդացնում իր «Այ վարդ լսիր աղա-  
չանքիս» երգում:

Այ վարդ լսիր աղաչանքիս,

Թույլ տուր թիկց քեզ քաղեմ,

Եվ քեզանով սիրած կուսիս

Փափուկ կուրծքը զարդարեմ:

Մի վախենար նորա կրծքին

Չես թառամիր քնքույշ վարդ.

Այնտեղ մատաղ կրծքի տակին

Կյանքի աղբյուր կա առատ....

Դատելով պոետի սիրո երգերից, նկատելի է, որ սերը ևս ձա-  
խող ընթացք է ունեցել: Հիշենք «Հալածված սիրը», «Ելեգիան» և այլն.  
բայց նրա մերժված սիրո երգերում լսելի չէ Իսահակյանի լալազին  
հառաջները, «Հոնոնդուրանոնդուր» լաց լացելը», անհանդիսա-  
ուանջալից պութկումները, և ոչ էլ Հովհաննիսյանի սիրո երգերում  
հանդես եկած զգացմունքների համարձակ զբանորումը՝ հիշենք Հով-  
հաննիսյանի «Երգը» և ուրիշ ոտանավորները: Ծատուրյանի երգած  
սերը զուսով է: Իր սիրո ավրումները, ինչպես նկատել ենք, պոետը  
գերազանցակես ընության պատկերների միջոցով է արտահայտել  
վարդի, սոխակի արևելյան պոետների օրինակով: Սիրո ջերմացնող  
ուժը ընդգծող ոտանավորներից է «Մի համբույր»-ը: Սառույցը գար-  
նան արեի պայծառ շըթունքից մի համբույր առնելով իսկույն հալ-  
վում է:

Ահա շողշողաց արեք գարնան,  
 Նայեց ստվերում ծածկված սառուցցին  
 Նայեց, հավանեց ու սիրեց նորան:  
 Եվ իբրև սիրո առաջին նվեր,  
 Սրեց սառցին մի համըյուր զրկեց,  
 Բայց այնքան այրող, այնքան բորբոքիչ:

Ծատուրյանի վերջին շրջանում զրած սիրո և բնության երգերը  
 առանձնապես աչքի են ընկնում տերյանական պոեզիային հատուկ  
 նուրբ ու նորատեսակ ոճերով. Այդ բանը հատկապես աչքի են ընկ-  
 նում նրա Տերյանին և Սուսանին նվիրած մի ընծայական ոտանա-  
 վորում, ուր Ծատուրյանն աշխատել է նմանվել Տերյանի գրության  
 եղանակին, դրանով իսկ բնութագրելու համար այն բանաստեղծին,  
 ում ձռնում է իր երգը:

Լեռան լանջ ելած, թավիշ գալարում  
 Մենք նստել էինք ու չէինք խսում:  
 Լեռան ետևին արփին էր մարում,  
 Երեկոն իր նուրբ շղարշն էր հյուսում:

Լեռան լանջ ելած, թավիշ գալարում  
 Մենք նստել էինք ու չէինք խսում...  
 Եվ սերը զաղանուկ մեր վառ սրտերում  
 Իր հավերժական պոեմն էր հյուսում...

Լոռության պոեզիայի մի նմուշ է Ծատուրյանի այս երգը, ուր  
 այն միտքն է հայտնի պոետը, թե Փառուքը սիրող սրտերի հոգու ան-  
 հուսը կպղծեց, լոռությունն ավելի ընդունակ է սիրող սրտերի համար  
 իրար համըզգալու տեսակետից, քան իրուքը:

Ծատուրյանի սիրո երգերի մեջ մեծ զգացմունքով է քնարերգ-  
 ված մայրական սերը: Իր երգերի առաջին գիրքը նա բաց է անում  
 «Մորս հիշատակին» ընծայական երգով, Մանուկ հասակից զրկվելով  
 յուր սիրասուն ծնողից Ծատուրյանը մինչև իր բովանդակ կյանքի  
 վերջը մտահան չի արել նրան, «Որպես սրբություն անջինջ կըպահվի»  
 սրտիս խորանում քո սուրբ անունը, —ասում է որբացած բանա-  
 աեղծը իր «Մայր» խորագիրը կըող երգում:

Ծաղկել օրերից անդարձ ու մարած,  
 Թու սերն եմ, մայր իմ, և հավերժ հիշում.  
 Հառաչող թախծով միայն նա մնաց,  
 Որբացած կյանքիս մութ ու մշուշում:

Քեզ հետ կյանքը էր վարդող  
 Առանց քեզ կյանքը—ցրտաշունչ զիշեր:



Զգացմունքների առատության անմիջականության տեսակետից Ծատուրյանի մորը նվիրած երգերը մոտիկից հիշեցնում են Խսահակյանի, Աղայանի, և Տիգրյանի նման բանաստեղծությունները:

\*  
\* \*

Ծատուրյանի պոեզիայի մի կարեոր մասն են կազմում նրա եր<sup>թ</sup> դիմական բանաստեղծությունները: Այդ ոտանավորները լույս տեսան Մոսկվայում 1901 թվին առանձին գրքով «Գրչի հանաքները» ընդհանուր խորագրով: Գրքի բնաբաննն է «Էն հանաքին ինչ ասեմ, որի կեսը դորթ չըլի»:

Այս տողերով Ծատուրյանը (բնորոշել է) իր երգիծանքի ռեալ քնութը: Արույշանի «Պարապ վախտի խաղալիք»-ի նման պոետը այսպիսի խոսքերով է ճանապարհ գնում իր «գրչի հանաքները»:

Գընա, իմ գըրքույկ, այ գըրչիս հանաք,  
Խոսիր մարդկանց հետ գու հանաքներով,  
Շատերի սրտին կըլինս զանակ...  
Շատերն էլ գուցե, կընդունեն սիրով:

Ռափայել Պատկանյանի նման Ծատուրյանը ևս հավատալով իր Երգիծանքի գուանակող՝ ուժին, աջ ու աջակ խարանել է մեր ժողովը զի զանազան խավերի մեջ նկատված երգիծանքի արժանի հոսությունները, ոչ այնքան ուղղելու նպատակով, որովհետև ծաղրի ենթակա դասերի ներկայացուցիչներն են ոչ իր հանրային հարազատ խավի ներկայացուցիչները, այլև այլասերված քաղքենի հայ օրիորդը, ընչափաղց վաճառականը, տգես քահանան, որը շջուխտ էլի գարին չէ կարող բաժանելու: Հիշենք «Հայ քահանան»: Հայ քահանան նախքան հոգևորական դասնալը, ամեն ասպարեզում փորձում է իր ուժից և երբ ոչինչ անել չի կարողանում, ձեռնադրվում է քահանա: «Մարդ չըլինի տերտեր կըլինի» ժողովրդական արդ սեղմ և խորամիտ միտքըն է ընկած Ծատուրյանի այդ ոտանավորի հիմքում: Մեկ ուրիշ երգում, «Թղթախաղ» խորագրով, բանաստեղծը խարանում է թղթախաղով տարված հայազգի տարբեր խավերի ներկայացուցիչներին.

Թուղթ է խալում, հարուստ, անփող,  
Տերտեր, ուսյալ և անուս,  
Նույնիսկ հայ կին, հայ ուսանող  
Ցընծա, հայ աղգ, աշքդ լուս...

«Իդեալիստ» երգիծական ոտանավորում հանգես եկող հայ ուսանողը ուսանողական կյանքի տարիներին այն համոզումն է ունեցել, թե խղճալի է այն մարդը, որը չունի իդեալներ կյանքում, նրա կյանքը անապատ է առանց իդեալների և սակայն կյանք մտնելով այդ ուսանողը

Գիտե՞ք իդեալն ինչ բանում գտավ  
Հարուստ օժիտով մի աղջիկ առավ  
Եվ կնկա փողով...հայտնի մարդ դառավ:

«Կաշառված մամուլ»ը ոտանավորում Ծատուրյանը համարձակ  
էլերպով ծաղրել է հայ լիրերալ բուրժուազիայի օրգան այլ և այլ  
պարբերականներին, որի համար բանաստեղծն անձնական կյանքում  
հալածվեց հարկ եղածին չափով: Ահա այդ ոտանավորը.

Երբ հայոց թերթում  
Ներբող են կարդում  
Տըզրուկ աղայի անվան ու փողին,  
Խակույն իմ մաքում  
Մի հարց է ծագում՝  
«Թերթը մըքան է ստանում տողին»:

Տխուր պատկերով են ներկայանում մեղ նաև հայ մամուլում  
Հանդես եկող կրիտիկոսները՝ նրանք իրենց բանավեճերում ոչ թե  
սկզբունքայնության զիրքերից են ենում և ըստ էության քննա-  
դառում, կամ արժեքավորում տվյալ ստեղծագործությունը, այլ հե-  
ղինակի անձնական արատներն են քննադառության առարկա դարձ-  
նում, անձնական ներ ու գծուծ: Հաշիվներ մաքրելով:

Միտք, իմաստ չկա ձեր զրվածքներում...  
«Բայց դուք, ով պալոն, փաստեր չեք բերում»  
—Փաստեր եք ուզում, համեցեք խկույն,  
Ձեր քիթը մեծ է, ձեր զիմքը դժույն,  
Աչքերնիդ ակնոց՝ միքուքնիդ երկար,  
Հստ լոգիկայի դուք շատ եք տիմար:

Վերջապես Ծատուրյանի երգիծանքի մտրակից անտառիծ չի  
ֆնացել նաև հայ ևսապաշտ, զրամաշորթ գիշակեր բուրժուազիան,  
որը ոչ մի բանով զորավիր չի կանգնել մայրենի գրականության  
անդամասնում աշխատող զըշի մշակներին: Իսահակյանին գրած իր  
մի նամակում այդ առթիվ կարդում ենք հետեւյալը. «Ուր էր այդ  
հասարակության սերը, երբ ես՝ զրականության մշակներիցս մեկը՝  
անողորմ կորված իմ սիրած զործից, որպես կաթնածարավ մանուկը  
ժոր ստինքից, տասնյակ տարիներ կյանքս մաշում էի այս և այն  
հայ աղաների կանարներում, նոքարության խեղդուկ և սպանիչ  
մթնոլորտում... ուր էր այդ սերը... Սրտիցս արյուն է կաթում, սի-  
րելի Ավետիք, երբ ասում են, որ ես 25 տարի ծառայել եմ մայրենի  
գրականության, ուս մի դիվական ծաղր է որ հնչում է ականջիս...  
25-ամյակիս կեսից ավելին ես զոհ եմ բերել ոչ թե մայրենի գրակա-  
նությանը, այլ մայրենի աղայությանը, իբրև հացի կարոտ մի նո-  
քար... եվ այդ ստրկական վիճակս անցել է հնոց այն հասարակու-

Քյան մեջ, այն. հասարակության աչքի առաջ, որը երեկ խուռն բազ-  
մությամբ եկել էր հորելցանական տոնիս և ոտքի կանգնած ծափա-  
հարում էր ինձ...»

Ծատուրյանի «Գրչի հանաքներ»-ի հասարակական արժանիքն-  
այս կերպ պարզ է դառնում: Ցույց տալ հայ իրականության հոռի-  
կողմերը և վիրահատի նման երգիծանքի սուր նշանաբան առած  
վիրահատել հասարակության մահացու վերքերը, հոգ չէ թե այդ եղա-  
նակով վարվելով Ծատուրյանի ծիծաղը կարող է մարդ սպանել:  
«Ծիծաղը մարդ կապանեա ճշմարտապես նկատել է Հ. Պարոնյանը:  
«Գրչի հանաքները» բանաստեղծություններում Ծատուրյանը օգտա-  
գործել է Փոլկորը, այսպիսի առանձին ոճերով համեմել իր երգերը.  
«Քաչալ գեղ ունես, քո գլխին արած, ո՛լլըուի մասին ագռավն է խո-  
սում», «Էշն էն էշն է, վալանն է փոխվիլ», «Էշն ուղարին է զցում մաս-  
իսարա»: Առաջի ժանրը ևս օգտագործելի է եղել Ծատուրյանի հա-  
մար (ահս «Զի և կով», առակ մեծերի համար):

\* \* \*

Ծատուրյանի թողած զբական ժառանգության մեջ կարենու տեղ  
են բռնում նաև նրա թարգմանական ստեղծագործությունները: Մեր  
և ոչ մի բանաստեղծ այնքան սիստեմատիկաբար չի զբաղվել թարգ-  
մանություններով, որքան Ծատուրյանը: «Ուսւ բանաստեղծներ»  
խորագրով նա լույս է ընծայել երկու հատոր: Ուսւ պոետներից Ծա-  
տուրյանը թարգմանել է Պուշկինին, Լերմոնտովին, Նեկրասովին,  
Նադյոնին, Պեչչեկին և այլոց: Ծատուրյանը հատկապես այս հեղի-  
նակներին է թարգմանել, որովհետեւ համզացել է այդ պոետներին,  
նրանց արտահայտած գաղափարները: Գաղափարների հարազատու-  
թյան հետ միասին այդ պոետները գրավել են թարգմանչին նաև  
իրենց պոեզիայի հմայիչ արվեստի համար:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

MAPES PUBLISHERS

## ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ

Հարուստ ու բազմաբռվանդակ է Ավ. Իսահակյանի 72-ամյակ կյանքի տարեգրությունը: Ավ. Իսահակյանը ծնվել է 1875 թվին Աւելքանդրոպոլում, նրա վաղ մանկության տարիներն անցել է Ալեքպոլում և Ղազարապատում: Բանաստեղծի մանուկ հոգու վրա իր ժամանակ մեծ ազդեցություն է թողել փորձաշատ տատը, որից նա լսել ու սովորել է տասնյակ հրաշապատում հեքիաթներ, որոնք վառել են պոետի պատանեկական բորբոքուն երևակայությունը, ինչպես որ Արինա Ռադիկոնովին՝ Պուշկինի երևակայությունը: Այդ նահապետական կյանքով ապրող ընտանիքում հասակ առնող Իսահակյանը սակայն, ամենից ավելի մոտ էր կանգնած իր մորը՝ Ալմաստին: Ալմաստը՝ իր մեջ խատացնում էր նահապետական հայ կողմը բոլոր ազնիվ ու շխտակ գծերը: «Թեև անգրագետ, անուս էր արլաս, բայց օժտված էր առողջ բանականությամբ և ընական խելքով: Կքած յուր բազմանդամ ընտանիքի հոգսերի առաջ՝ ամենի հետ ապրում էր, ամենքի չափ տառապում: Գեղեցկատեսիլ վեհ ու վես մի կին էր մայր՝ սիրաշատ ու սիրառատ, — ասում է բանաստեղծը:

Լինելով իսահակյաների ընտանիքի ամենակրտսերը՝ Ավետիքը սիրվել ու փայտիայվել է եղբայրների ու քույրերի կողմից ևս:

Դրաճանաչությունը փոքրիկ Ավետիքը սովորում է 7 տարեկան հասակում, Պոլսից եկած մի կողչից, որին վարպետ էրն կոչել քաղաքացիները: Վարպետի մոտ ավարտելով իր ուսման դասընթացը, այնուհետև նա ընդունվում է Ալեքսանդրոպոլի հայոց հոգեոր գպրոցը՝ Այդ ժամանակ Ալեքսանդրոպոլում կար նաև ոռւսաց գպրոց: Տակավին 3-րդ պատրաստական դասարանում էր նա, երբ 1885 թ. ցարական հայահալած քաղաքականության հետեւնքով փակվեցին ամեն նուրեք հայկական գպրոցները: Թիկուս չմալու համար՝ ժամանակավոր համար՝ գործադրությունը կար առաջ և թե ոռւսաց գպրոցում սովորելիս պատանի Ավետիքն աչքի էր ընկնում իր ընթերցասիրությամբ և հայտնի էր իրեւ ոտանակորներ գըող:

\*

\*

«Յուր համար» գրելը նա սկսել էր հենց այդ շրջանից, 11—12 տարեկան հասակից՝ գեղջկական, աշուղական երգերի նմանողությամբ:

Նրա աշուղական ոգով զրած այդ ստանավորները տակավին անվարժ գրչի հանաբներ լինելով հանդերձ՝ մեծ հավանություն էին գտնում նրա խաղընկերների, գյուղական պատանիների կողմից, որոնց համար նա կարգավիս է եղել զրածնքությունը մեջ տաղերի լայն մոտիվը եղել է ոռոմանտիկ սերը, Հիշենք, որ սիրո առաջին զգացմունքը պոետի մեջ զարթնել է շատ վաղ հասակից. տակավին պատանի էր նա, երբ սիրահարվում է իր խաղընկերներից մեկին, դա գյուղական մի աղջիկ էր Զարո անունով, որին պոհառը թե այդ ժամանակ, թե հետագայում նվիրել է բանաստեղծությունների մի ամբողջ ցիկլը Սիրո երգերին զուգընթաց այդ շրջանում Խստհակյանը զրել է նաև հայրենասիրական ոստանավորները: Հիշենք, որ 1880—1890-ական թվականները Արովյանի, Պատկանյանի, Նալբանդյանի, Բափֆու, Պողյանի ստեղծագործությունների գերիշխանության տարիներն էին: Բանաստեղծի սեղանի զարդերից էր, բացի հիշյալ հեղինակների գործերից նաև Միանսարյանի, այն ժամանակ այնքան տարածված, «Բնար Հայկականը»: Ընթերցասեր պատանին, որ կարծես թե Սայաթ-Նովայի «Գիր սիրե», «Ղալամ սիրե», «Յար սիրե» խոսքերն էր դարձրել իր նշանաբանը, պոկ չեր գտիս զրբերից, կարգում էր ու կարգում:

Խստհակյանի մանուկ հոգու վրա մեծ ազգեցություն է թողել մի շարք հայ զրողների հետ հատկապես և Արովյանը, Արովյանի «Վերք Հայաստան»-ին այն հազվագյուտ հայրենասիրական գիրքն է եղել որ հեղեղն խոսքերով խանդավառել է պատանի Սվետիքի հողին, թե վագորել նրան ապագայի շքեղ տեսիլներով: Վերապրելով տասնյակ տարիներ առաջ «Վերք»-ի իր վրա գործած ապավորությունները՝ Խստհակյանն այդ առթիվ գրում է. «...Խմբով զնում էինք գյուղից գուրս, մեր հանգում որոշ տեղից, պարզ երևում է Անին, նրա պարսպները, նստում էինք այնտեղ, երեսներս գեղի Անին, կարգում էինք գիրքը, նայում էինք Անիին և կարգում, կարգում, ինչ օրբազան պահեր, ինչ աննկարագրելի ոգնորություն: Մենք չեինք ապրում այլևս ներկայի մեջ, իրական աշխարհում, երևուայության մեջ էինք սավառնում, հայ ժողովրդի փառապանծ անցյալի մեջ և խորհրդավոր լուսավոր գալիքի հանգեց: Եվ երբեք մենք չզգացինք վերք ու ողբ, մենք չտիրեցինք, մենք չընկճվեցինք հայկական վշտով ու վերքով, թեև լցվեցինք վրիժառությամբ, այլ սակայն գերազանցապես վառվագինք հայրենասիրությամբ, արիությամբ, հերսոսությամբ. մենք թևավորվեցինք ապագայի շքեղ տեսիլներով: Մենք տեսնում էինք Անին՝ վերակենդացած, հոյակաս պարիսպներով, ներշնչող բուրգերով, զինվորներով, զորավարներով, սպարապետներով, սաղավարտներով, քաջ ժողովրդով, ազատ, անշղթա...».

1888 թվականի սեպտեմբերի 13-ին պատանի բանաստեղծը ձնողների հետ ուխտ է գնում էջմիածին և այցելում Դոկորդյան ձեմարանը: Նրա մեջ ցանկություն է առաջանում զառնալ ձեմարանի սան: Ստեղայն չունենալով պահանջվող կրթական փաստաթուղթ, նույն տարում նրան չի հաջողվում գնալ ձեմարան, ուստի ստիպված է լինում ժամանակավորապես ուսանել Հառիճով վանքում: Ընդունակ և ուշիմ պատանին նույն տարում փոխվում է երկու դասարան, իսկ հաջորդ 1889 թ., առնելով իր ավարտման վկայականը, մեծ եղոր հետ ուղերգում է էջմիածին, ուր, ենթարկվելով քննության, ընդունվում է ձեմարանի երրորդ դասարանը: Ձեմարանում այդ ժամանակ ուսանում էին շուրջ 150 սան, որոնք բոլորն ել գիշերօթիկներ էին: Գիշերօթիկների մեծ մասը Արեելյան և Արեմտյան Հայաստանի զանազան գավառներից հկածներ էին, ձեմարանն այսպիսով մի փոքրիկ Հայաստան էր իրենից ներկայացնում, ուր հնչվում էին բոլոր գավառաբարբառները:

Տակավին 5-րդ դասարանի սան էր Խանակյանը, երբ 1891 թ. լսարանցիները դասաղուկ հայտարարեցին:

Դասադուլավորները լսարանցիներն էին, սրանց արձագանքում էին փոքրանասակ դասարանցիները, որոնց մեջ և գտնվում էր պատանի Խանակյանը: Դասադուլավորները պահանջում էին ձեմարանի վարչությունից բարեփոխություն մտցնել ձեմարանի դասադության և ներքին կյանքի մեջ:

Լսարանցիների պահանջները մերժվեցին ձեմարանի վարչության կողմից: Դրա հետևանքը եղավ այն, որ դասադուլավորները (լսարանցիները) թողին ձեմարանը և հետացան: Սրանց օրինակին հետեցին դասարանցիների գաղափարական առաջնորդները՝ Խանակյանը և մի երկու ուրիշները ևս, ինքնակամ կիրառով հետանալով ձեմարանից, վերադառնալով Ալեքսանդրովով և պատմելով ծնողներին ձեմարանում տեղի ունեցող աշակերտական ապստամբությունների մասին, որին մասնակից է եղել ինքը Խանակյանը ու ինքնակամ հետացել, նաև արժանանում է ծնողների հանդիմանությանը, սակայն մնում է անսահան:

Լսարանցիների կազմակերպված դասադությունը մի քանի ամիս հետո մեռնում է Մակար Կաթողիկոսը, ձեմարանի վարչության իրավունքներն անցնում են մշակական գաղափարների համակեր Սեղբակյանի ձեռքը: Հաշվի առնելով հայ թիրթերում լսարանցիների օգտին բարձրացրած բողոքները, Սեղբակյանը կոչ է արձակում դասադուլավորներին վերադառնալ ձեմարան, խոստանալով կատարել նրանց սառաջադրած պահանջները: Լսելով Սեղբակյանի արձակած կոչը, դա-

սադուլավորները, վերագառնում են ձեմարան՝ իրենց կիսատ թողածուսումը շարունակելու: Սրանց հետ վերագառնում է և իսահակյանը՝ Ակայն ձեմարանի տեսչությունը իսահակյանին չի ուզում վերընդունել, որովհետև նա վտարված չի եղել տեսչության կողմից, այլ, արհամարհնելով գոյություն ունեցող կարգերը, ինքնակամ է հեռացել: Սրտանց չուղենալով այլևս մնալ ձեմարանում, տեսչության այդ մերժումից հետո իսահակյանը չի թափանձում վերընդունել իրեն և մի տեղեկանք վերցնելով ձեմարանի տեսչությունից առ այն, որ նասովորել է Գեղվորդյան ճեմարանում և գուրս եկել 6-րդ դասարանից, կնում է: Այսպիս հեշտությամբ ձեմարանին հրաժեշտ տալու պատճառը այն էր, որ իսահակյանը կլանված էր բաֆֆիական ոռմանափղմով, նրա մեջ ցանկություն էր առաջացել գնալ և անձամբ մասնակցել արեկմտահայերի պատարգական շարժմանը:

Սակայն, ինչպես ինքը իսահակյանն է ասում, իր մի ոտանավորում, «Սազը ինձ չթողեց, որ կտրին դառնամ»: Առաջին ոտանավորը, որը տպվեց 1892 թ., Թիֆլիսում, լույս տեսնող Տիգրան Նազարյանի «Տարագ» հանգեսում, իսահակյանի «Ծաղիկ» է նորարողբաջանաստեղծական երախայրիքն էր: 1893 թ. ուսումը շարունակելու նպատակով իսահակյանն ուղղորդվում է արտասահման՝ Վիեննա:

Առնելով պանդիմափ ցուպը և հրաժեշտ տալով հայրենի երկրին՝ իսահակյանը սկիզբ է դնում իր թափառ կյանքին: Նրա արտասահմանյան կյանքի շրջանը լի է ոդիսականներով և շատ նման է հայրենի երկրից տեղահան եղած հայության ճակատագրին: ուր ասեք: «Ո չի եղել նա՝ տարագիր բունավեր այդ թուունը»:

Զուր չե, որ հայ զբականության հավերժական ճամբորդ Իսահակյանն իր թափառ կյանքի զբական սիմվոլն է ընտրել ուղտինագարերի այդ ճամբորդին:

Երկու տարի արտասահմանում մնալուց հետո, 1895 թվին բաշնաստեղծը վերադառնում է հայրենիք խորապես զգալով վաթանի հողի ու ջրի անուշությունը:

1895 թ. արտասահմանից հայրենիք վերադառնում պոետի շուրջնատեղծվում է ընտանեկան, ընկերական ու բարեկամական ջերմմթնուրա: Իսահակյանն այդ ժամանակ արգեն իսկ խոստումնալից բանաստեղծի համբավ էր վայելում գրասեր հասարակության մեջ:

1897 թ. պոետը հրատարակության է պատրաստում իր բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն: Դա նրա «Երգերն» ու վերքերն» էր, որ լույս տեսավ Ալեքպոլում 1898 թ.: «Երգերն ու վերքերը» հայրենի երկրի դաշտորայքի «Շուշաններից ու լալաներից չյուղած մի թարմ ծաղկեփունջ էր», քերթվածների մի ընտիրժողածու, որ գալիս էր հարստացնելու հայոց բանաստեղծական գրականությունը:

«Երգեր ու վերքեր» երգաշարի երկումով իսահակյանը մեկից ճա-

նաշվեց որպես առաջնակարգ քնարերգակ թէ ընթերցող հասարակության լայն խավերի և թէ պաշտոնական զբարնապատության կողմից Նոյն 1898 թ. էր, որ ցարական կատավարության ռազմական աքսորականի դառն օրերն էր ապրում և հայ նշանավոր վիպահան Ալեքսանդր Շիրվանզապեն: Աքսորավայրից իսահակյանի գրած նամակներից երեսում է, որ նա բանտված թոշունի նման անձկություն է զգացել այնտեղ: Աքսորավայրում իսահակյանը գրում է մի շաբթ քնարական հուզիչ երգեր, ինչպիսիք են՝ «Սիրեցի յարս տարան», «Դարզը հետս է, հետս կուզա», «Սև մութ ամպեր», «Ալեմեր սիրտր» և այլն: Այստեղ բանաստեղծը ծանոթանալով իտարացի մեծ հայրենասեր Գարիբալդու զինակիցներից մեկի՝ Զիրվաննի հետ, լսում է նրանից Գարիբալդու սիրադործություններից գրվածներ: Այդ պատմությունների հիման վրա հղանում է հայրենասիրական բուռն շնչով գրած իսահակյանի արձակ լավագույն էջերից մեկը՝ «Գարիբալդիտականը» խորագիր կրող պատմվածքը: 1899 թվի հունվարին լրանում է իսահակյանի աքսորանքի ժամկետը, և նա վերապառնում է հայրենիք: Այստեղ պահտը հաղիվ մի քանի օր գագար է առնում: և իսկույն սկսում է թափառութների մի նոր շրջան: Նա լինում է կարսում, Սարիղամիշում, Բասենում, Նախիջևանում, Ախալցխայում, Զավախիսում, Թիֆլիսում, Բագվում և այլուր: Այս թափառութներից ընթացքում, բազմազան տպագրությունների ազգեցության տակ, նա գրում է քնարական բանաստեղծության սքանչելի նմուշներ: որոնցից են՝ «Ընկերներս վաղ են մեռել», «Մայրիկ նայիր արեն ինչպես», «Մութ անտառով լուռ ման կուզամ», «Անհայտ, անորոշ» «Ճիկերական զանգ» և այլ երգերը:

1898 թվականին Թրիլիսի զալով, իսահակյանն ավելի է ամրապնդում իր կապերը Թումանյանի հետ, որին ծանոթ էր գեռ 1892 թվից: Իսահակյանի Թրիլիսիում եղած ժամանակ էր, որ Թումանյանը, ժշտական բնակավայր էր Ծնարել քիչեղեւ Քոչարյանի տունը Բեհբության փողոցի վրա: Այստեղ նա իր շուրջն է համախմբում գրական, մարդկանց, կազմակերպում գրական ասուլիսների երեկոներ, որոնց ակտիվ մասնակիցներն են եղել՝ Աղայանը, Մուրացանը, Փափազյանը, Դեմիրճյանը, իսահակյանը և ուրիշները, Թումանյանն իր սան ստեղծած գրական այդ օջախը, Գոնկուր եղբայրների օրինակով, վերնատուն էր Կոչել, իսկ վերնատան պատվավոր անդամներին՝ վերնականների: Այստեղ հավաքվող վերահիշյալ գրողները կարդում էին ոչ միայն իրենց սեփական ստեղծագործությունները, այլ և ուսումնասիրում էին համաշխարհային գրականության աչքի Ծնկնող գեմքերի ստեղծագործությունները, վերնատան անդամների մոտ իսահակյանն ուղիղների հետ կարգում է և իր մի շաբթ ստեհծագործությունները: Ինչպես նաև գեռ 1895 թ. ձեռնարկած իր էպիկական երկը՝ «Դե-

սուլթանը և մանուկ Հայաստանը» վերնագրով: 1900 թ. մարտին Իսահակյանը նորից ուղևորված է արտասահման, լինում է Ցյուրիխում, ուր երկու եռամսյակ կանոնավոր կերպով հաճախում է համալսարանի փիլիսոփայության և գրականության ֆակուլտետների դասընթացները: Այդ շրջանում Իսահակյանը գրում է մի քանի տասնյակ գողաբեկ երգեր՝ «Սի ևս սիրու ճամբի ափում», «Երազ տեսա որ ծովի ափին», «Սարի հովի պիս ամպի փեշով» և այլն:

1901 թ. գեկտեմբերին Իսահակյանը նորից վերադառնում է հայրենիք և սկսում իր նորանոր շրջադայությունները Անգրկովկասյան մի շորք քաղաքներում ու Հայաստանի գավառներում: Լինում է Բագվում, ուր հրատարակության է պատրաստում իր բանաստեղծությունների նոր ժողովածուն, որ լույս է տեսնում 1902 թ. «Հին ու նոր վերքեր» վերնագրով:

1907 թվին էր, որ Մոսկվայում՝ Տերյանը և ուրիշները, հրատարակության են պատրաստում Իսահակյանի բանաստեղծությունների մի ժողովածու սուսերեն թարգմանությամբ ու փոքրիկ ներածականով, որ պատկանում էր գրանցից մեկի գրչին: Ժողովածուն լույս է տեսնում նույն թվին:

Հաջորդ՝ 1908 թվին Իսահակյանը Թրիլիսի է գնում կարգավորելու իր բանաստեղծությունների նոր ժողովածուի՝ հրատարակության գործը («Երգեր ու վերքեր»):

Թրիլիսում իր բանաստեղծությունների հրատարակության գործը կարգավորելուց հետո, նույն 1908 թ. Իսահակյանը մեկնում է Բագու, ուր կարճ ժամանակով ստանձնում է Բագվի հայոց կուլտուրական Միության հրատարակչական գործը: Իր կարճատև գործունեության ընթացքում հանգստնակած գումարով Իսահակյանը վերահրատարակում է Արովյանի անման «Վերք Հայաստան»-ին, իր ուսուցիչ Հովհաննիսյանի բանաստեղծությունների ժողովածուն և մի երկու այլ թարգմանական երկիր օտար հեղինակներից:

Թրիլիսից Եվրոպա գնալու ժամանակ, նույն 1908 թվին, ժանդարմերիան Թրիլիսի հայարանում ձերբակալում է Իսահակյանին և տանում է Մետեխի բանտը, ուր գտնվում էին շատ ուրիշների հետ նաև Հ. Թումանյանը և հայագետ Ստեփան Մալիասյանը: Մանքագործ էին ցարիզմի հայահալած քաղաքականության: Շուրջ վեց ամիս Իսահակյանը հեծում է Մետեխի բանտում:

Իսահակյանին հաջողվաւմ է վեց ամսյա բանտարկությունից հետո, 1909 թվին գրավականով ազատվել կալանքից: Այս ամենի հետեւանքով բանաստեղծի մեջ հարաճուն կերպով հասունանալ են սկսում արամագրություններ փախչելու ցարական իշխանության սահմաններից, նրա օրենքներից ու «Վայրագ հովանուց»: Ինչպես կտեսնենք, փախուստի այլ արամագրություններն իրենց գրական արտահայտությունը գտան նույն թվին գրած «Արու Լալա Մահարի» պոեմում:

Պոեմի գրության հաջորդ՝ 1910 թվին իսահակյանը մեկնում է արտասահման։ Բանաստեղծը լինում է Պոլսում, ուր ընկերական և բարեկամական կապեր է հաստատում հանճարեղ Կոմիտասի հետ, որին ծանոթ էր դեռ էջմիածնից, և նշանափոք նկարիչ Թերլիմեղյանի հետ, իսկ արևմտահայ զրական գեմքերից՝ Գրիգոր Զոհրապի, Սիպիլի, Միամանթոյի և այլոց հետո Ընդամենը մեկ տարի մնալով Պոլսում, հաջորդ, 1912 թ. իսահակյանը ուղեկորդում է Վիեննա և այստեղից անցնում Ցյուրիխ, մնելով Այստեղ իսահակյանը ծանոթանում է Լունաշարսկուն։ Պետք է նկատել ասում է իսահակյանը, որ լունաշարսկին ինձ վրա թողեց մեծ տպավորություն։ Նա լավատեղյակ էր գրեթե բոլոր ազգերի զրականություններին։

1912—14 թ. թ. Վիեննայում, Ցյուրիխում, ժնևում եղած ժամանակաշրջանում, մեր բանաստեղծը ստեղծագործում է հիշատակության արժանի բավական թվով քնարական գործեր, զրանցից հիշենք «Աշուն է, քամի», «Կարծեք երեկ էր», «Բախուը ինձնից թռավ զնաց», «Չուն է գալիս, ու թախծալի», «Արտեղ պիտի հսնզչի մի օր» և այլն։ 1914 թ. իսահակյանը, իր տարեցիք Մհերի նման «Ճամբեն ոտքն առած»—ուղեղորդում է Բենլին։ Դարձյալ նոր միջավայր, դարձյալ նոր մարդկական Բենլինում է, որ իսահակյանը ծանոթանում և մտերմական կապեր է հաստատում նաև Շեքսպիրի կլասիկ թարգմանիչ՝ Բենլինի պարսից գեսպան Հովհաննես Խան Մատեյյանի հետ։ Բենլինում ընդամենը մեկ տարի մնալուց հետո, բանաստեղծը նորից մեկնում է մննել 1921 թ.։

1920 թ. մեր բանաստեղծը վերաբատարակում է իր երգերին՝ նոր ժողովածուն՝ «Հայրենի աղբյուրից» վերնագրով։

1936 թ. բանաստեղծն ընդմիջությունում է իր ուսարակությունը քերագանում Հայաստան։ Փարիզի հայ աշխատավորությունը քաղաքի երկաթուղու կայտանում ծովացած, ողջերթ է մաղթում հայրենիք վերադարձող պետություն։ 1936 թ. գեկանմբերի 5-ին ոտք գնելով Հայաստանի հողի վրա՝ իսահակյանը կատարում է իր այն խոստումը, որ տվել էր տարեիներ առաջ իր այս երգում։

Մայր իմ ժողովուրդ, զեսպի քեզ կգամ,  
կտամ զեսպի քեզ, հայրենի աշխարհ,  
ինչ որ վեհ ունիմ, սիրով ձեզ կտամ,  
եզ սիրսո, կյանքս միայն ձեզ համար։

«Եվ ես վերադարձա հայրենիք։ Ինչպես չվերագառնայի իմ բարեկամաշաբանը հայրենիքը՝ վերածնված հիմու, հոգով-սրտով զուրգությամբ այն նվիրական նողը, ուր կան այնքան քաղցր ձայներ, հին-հին դարերից եկած, հարազատների ձայներ, նահատակների ձայներ, հերոսների ձայներ։ Ուր կան մտերիմ զեմքեր, քնարական գաշտեր, վիպական լեռներ, մայրենի բարբառ, ժողովրդական երգե-

արտագին մթնոլորտ, վերջապես հայ ժողովուրդը, աշխատավոր և արդար, Հայաստանի պատկառելի ժայռերից ծնված, քարից հաց հանող և քարից հրաշքներ կերտող հայ ժողովուրդը ես ապրում եմ հիմա սոցիալիստական Հայաստանում, Մեծ Միության մեջ, իմ երազների, իմ գեղեցրումների վերջնական հանդրվանում: Ես ապրում եմ ժողովը՝ դիմաց հետ, տեսնում եմ նրա կուլտուրական և տնտեսական աճն ու վերելքը...»:

Սովետական Հայաստանում եղած այս տարիներին էր, որ Խսահակյանը գրում է հայրենասիրական զգացումներով առկեցուն մի պատշվածք ես, վերցրած Բասկերի կյանքից «Գերնիկայի նվիրական կաղնին» վերնագրով: Այդ բոլորի հետ Խսահակյանի գրեն արտադրում է նաև մի շարք չափածո ու արձակ գործեր, որոնցից են «Հունու հովիվը», «Բին գյոլին», «Նվեր հայ ճարտարապետության», «Դամպիթ Բեկին» ոտանավորները, Բացի այդ գործերից ընկեր ՍՏԱԼԻՆի ծննդյան 60-ամյակի առթիվ Խսահակյանը զրում է մի ձոներդ, ուր գեղարվեստորեն գեղեցիկ ձեռվ վեր է հանում առաջնորդի Կերպարը: Ռւշադրության արժանի է և 1938 թ. Խսահակյանի գրած «Հայրենի հողը» պոեմը, ուր արտահայտված է մեր մատնազիր Փալստոսից և այլ պատմական աղբյուրներից եկող հայրենի հողի անուշության գաղափարը: Բացի հիշյալ գործերից Խսահակյանն աշխատում է ավարտին հասցնել տարիներ առաջ իր ձեռնարկած «Ուստա Կարո» ստվար վեպը: «Հայկական Դոնիքիշութը», վեպի հերոս Ուստա Կարոն, հավաքական մի տիպ է, որ իր մեջ խտացնում է փիլիսոփայող հայ ժողովրդի բարոյական բոլոր նորմաները: Այդ վեպի գրության դորձն Խսահակյանը ձեռնարկել էր գեռ 1910 թ., բայց հեղինակի կյանքի հանդամանքները գասալորվել էին այնպես, որ նա ժամանակ չի ունեցել տևականորեն իրեն գամել գրասեղանին: Այժմ նա աշխատում է ավարտել այդ վեպը:

1940 թ. գեղտեմբերի 25-ին լրացավ ստեղծագործական այդպիսի անդադրուն աշխատանքի լծված բանսատեղծ Խսահակյանի ծննդյան 65-ամյակը: Գրողների Համամիութենական միության, Հայաստանի կառավարության և Հայաստանի գրողների կազմակերպության նախաձեռնությամբ Երևանում ամենայն հանդիսավորությամբ տոնվեց Ավ. Խսահակյանի հոբելյանը: Միության բոլոր թերթերն ու հանդեսները ջերմորեն արձագանքեցին բանսատեղծի հոբելյանին: Հանդիսավոր նիստի օրը գեղակեմբերի 25-ին, Խսահակյանը երախտագիտության իր սրտառուչ խոսքի մեջ ասաց: «Այս բոլոր ուղերձները, պահցիաները, ծափերը, մի խոսքով ձեր բոլորիդ այսքան խանդակառ, արտագին ողջույնները իրենց մեծագույն մասով ինձ չեն պատկանում... որանց արդար տերը հայ ժողովրդի բաղմակարյան գրականությունն է... ես իմ ամբողջ հությամբ պարտական եմ նրան, իմ պոեզիայով, իմ արվեստով: Եղ ես հպարտ եմ և բախտավոր, որ երկար տարիներ

Հավատարիմ և անձնվեր մշակներից մեկը լինելով հայ խոսքի և  
 մաքքի անդաստանում, այսօր արժանացնեմ իմ իմ ժամանակակից-  
 ների բարձր գնահատականին:

Իսահակյանի խողաղ ստեղծագործական աշխատանքը շարունակ-  
 վեց մինչև այս ժամանակ, երբ ուսդիոն կուժեց (գա 1941 թ. հու-  
 նիսի 22-ին էր) գերման-ֆաշիզմի ուխտադրուժ հարձակման լուրը  
 խաղաղ կյանքով ապրող մեր երկրի վրա, Պատերազմի առաջին իսկ  
 օրից փոխեց մեր երկրի խաղաղ կյանքը: Ամենքը, ամենքը շա-  
 պեցին զենքի ձեռնել և պայքարի մեջ մտնել նենդ թշնամու գեմ.  
 Փոխվեց նաև սովետական գրականության երգերի հունը: Իսահակ-  
 յանն Ալեքսեյ Տոլստոյի, Ֆադեևի, Էրենբրուրգի, Նաիրի Զարյանի և  
 այլոց նետ իր քնարը փոխեց սաղմի կոչող շնչորի և առաջին երգը,  
 որ որոտաց նրա շառաչալից փանդոից, «Խազմակոչ» բանաստեղծու-  
 թյունն էր, որին հետեւցին նրա արգար ցանումով լի մի շարք հոդ-  
 վածները: «Ֆաշիզմը պիտի խորտակիի», «Հաղթանակը պրոգրեսի  
 կողմն է» և ուրիշները, որոնց մեջ զգացվում են ֆաշիզմի գեմ իսա-  
 հակյանի ունեցած բուռն ատելությունն ու ցասումը, Փաշիզմի, որի  
 վերջնական պարտությունը նա տեսնում էր վիշապաքաղ Սովետական  
 Բանակի պղողապատճեռու ուժի մեջ (հիշենք «Կարմիր Բանակի փա-  
 ռասպանծ մարտիկներին» խորագիրը կը նրա հոդվածը), Թշնամու  
 գեմ իսահակյանի մզած գաղափարական պայքարի արձագանքները  
 հասնում էին մինչև արտասահմանյան հայությանը, մեր խոսքը պետ-  
 տի այն հոդվածների մասին է, որոնք գրված են Սովետական Միու-  
 թյունից զուրս ապրող հայության համար: Նկատի ունենալով  
 Իսահակյանի թե անցյալում հայ գրականության մատուցած մեծ ծա-  
 ռայությունը և թե մեր օրերում նրա ծավալած գրական-քաղաքական  
 բելմնապոր գրքունենությունը, Միութենական կառավարությունն  
 Ավետիք Իսահակյանին պարզեատեց Լենինի շքանշանով: Հայաս-  
 տանի կառավարությունը Իսահակյանին շնորհեց Հայկական Գիտու-  
 թյունների Ակադեմիայի իսկական անդամի բարձր կոչումը:

## ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԼԻՐԻԿԱՆ

1898 թ. լույս տեսած «Երգեր ու վերքեր» խորագիրը կրող բանաս-  
 տեղծությունների անգրանիկ ժողովածուի կենտրոնական և գրեթե  
 միակ մոտիվը սիրո մոտիվը է. ուրիշ հարցեր ու զգացումներ չեն հու-  
 զել այդ շրջանում Իսահակյանին:

Մենակ սիրո երգը շողաց  
 Կյանքիս ամեն ծալքերում:

Ճշգրիտ բանաստեղծը յուր ժողովածուի «Առաջա-  
 ծամարտապես նկատում է բանաստեղծը յուր ժողովածուի «Առաջա-

բանի տեղ՝ գրաված երգում։ Իսահակյանի, իրրկ ոռմանտիկ պատառ նուր, այդ շրջանի սիրո երգերի համար բնորոշ են անրջանքը, թառ խիճն ու երազանքը։ Պատահական չէ, որ նա նմանօրինակ բանաստեղծություններում իր ապրումները ամենից ավելի արտահայտել է երազների ձևով։ «Երազ տեսա ձեր տան առաջ», «Երազիս մեջ երկինք տեսա» կամ «Դիշերս գեշ երազ տեսա, տեսա սերս սուզի մեջ»։ Ահա բանաստեղծի այդ շրջանի երգերում տեղ գտած բնորոշ արտահայտություններն ու դարձվածքները։

Ծորմանտիզմի մշակը կամաց-կամաց ցրվում է պոեմի աչքերից, հասունության տարիները թևակոխող բանաստեղծը սթափվում է ու ինքն իրեն ասում։

Աննյութ, անմարմին, անկիրք սեր չկա,  
Այս, մաքուր սերը երազ է միայն։

Նախկինում «Երազ սիրո ծարավի» բանաստեղծն այս շրջանում արդեն սեալ աչքակ է նայում սիրո հարցերին։ Այժմ նրան հրապուրում է կինը ոչ թե հեռվից, այլ մասինից։ Դրա լավագույն արտահայտությունն է «Մեղքի երգեր» խոսուն վերնազիրը կը ող. բանաստեղծությունները, ոռմանտիզմի օլիմպիական բարձունքից բանաստեղծն իջել է այստեղ կյանքի «Գարշ ճահճուռը» «Ժաղվելով կնոջ պագոստ գրկի մեջ»։

Կնոջով, երգով, գինով արբիր զուն։—

Հայտաբարում է նա այդ կարգի երգերում։ Շուտով, սակայն մեզուտայս երգերին հետեւում են զղման մեղեգիները։ Այս ճանապարհուով է զուրս գալիս Խահակյանն իր սիրո երգերի երկրորդ փուլից և թևակոխում երբորդ շրջանլից։ Այդ շրջանում բանաստեղծը իր կյանքի 40-արդիների գագաթից է նայում սիրո հարցերին և փիլիսոփայական երանդ է տալիս այդ զգացմանը յուր «Հավերժական սեր»-ը լեզենդում և նման այլ գործերում։ Ինչպես Մաքսիմ Գորկու «Աղջկին ու մահը» երկում, այնպես էլ Իսահակյանի այս լեզենդում շոշափված է սիրո անմահության գաղափարը փիլիսոփայական տեսակյունով։

«Ժամանակը իր վախճանին կհասնի,

եվ արկը մի՛ բուռ մոխիր կդառնա,

Բայց իմ սերը վախճան չունի, քուն չունի,

նա հավերժ է, նա անշեջ է, նա անմահ...»։

Այս ձևով է նա հերքում իր մահկանացու լինելու հանդամանքը։

Գալով Խահակյանի՝ մորը նվիրած սիրո երգերին պետք է նըկատել հետեւյալը։ Մեր գրականության պատմության մեջ զժվար է գտնել մի այլ զրող, որ այս քաժնում գերազանցի Խահակյանին ձիշտ է, թվակարինցին, Աղայանը, Տերյանը ամենայն անկեղծությամբ ու հուզականությամբ են երգել մոր կարոտը, բայց Խահակյանի գիրը «ուրիշ զբեն է»։ Գաղափարների վեհությունը, անմիջա-

կանությունը. բայց մանավանդ էմոցիան այդ երգերի էական հասկանիշներն են:

Բանաստեղծի մորը նվիրած սիրս երգերը, նրա գրական գործունեության վաղ շրջանում կրում էին անձնական եսական բնույթը՝ նրա երգն ուղղված էր մենակի իր մորը՝ Ալմաստին: Շուտով, սակայն, երբ բանաստեղծի մեջ զարգանալ են սկսում հանրային շահագրգռության, զացացունքները, այդ շրջանում գրած նրա սիրո երգերը այլևս գուրս են գույիս անձնական սիրո անձուկ շրջանակներից, և բանաստեղծը «ծովի չափ մեծ սիրով» է լցվում գեղի այլ մայրերն ու բալեքը Այսպիսով, պոետի այս երկրորդ շրջանում գրած նման երգերը հումանիզմի վեհագափարներով են սկսում շնչել, մի հանգամանքու, որ ավելի վեհություն ու խորություն է տալիս նրա այդ զացացունքներին: Դրա լավագույն օրինակն են այս և նման այլ ստանավորները:

Կը տեսնեմ ահա լուռ երեկոյին  
Բարակ ծուխ կենի իմ հոր օջախեն՝  
Եվ ուսիրս մարմանդ կօրօրվին,  
Ծղրիդը կերպե անտես խորշերեն...  
Մեզմ ճրագի տակ նստել է տիուր  
Ծերունի մայրս, մանկիկս զրկին,—  
Մուշ-մուշ քննել է մանկիկս անդոր  
Ու աղոթք կանե մայրիկս լո՛ին.—  
«Ամենեն առաջ թող ինքը հասնի  
Ամեն հիվանդի, հեռու ճամբորդի,  
Ամենեն հետո թող ինքը հասնի  
Քեզ, իմ խեղճ որդի, իմ պանդուխտ որդի»:

Արդարեւ, սեփական նեղ եսի շահերն այստեղ ստորադասված են լնդհանուրի շահերին: Սա անձնազոհության այն վսեմ օրինակն է, որով այրվում է բանաստեղծի հուման հոգին: Այս նույն ոգով պոետը գրել է մի շարք այլ բանաստեղծություններ ևս «Երազ տեսա», որ մայրս թշլառ և այլն, որոնց մեջ նույնպես երևան է եկեղեցականի մեծ ձգուումը «գեղի սիրո, հումանիզմը բարության բարձր ոլորտները...»:

\*  
\* \*

Ավ. Իսահակյանի ստեղծագործություններում սիրո երգերին առընթեր մեծ տեղ են բանում նաև բնության երգերը: Թեև երկար ժամանակ Իսահակյանն ապրել է արդյունաբերական վիթխարի քաղաքներում՝ Բեռլին, Փարիզ, Պոլիս, Հռոմ, Լայպցիգ, Վիեննա (և այլուր), բայց քաղաքը ներշնչման ազրյուրը չեղարձել Իսահակյանի համար: Եվ իսկապէս ուրբանիստական մոտիվների բացակայությունը Իսահակյանի պոեզիայում, գրա լավագույն

ապացույցն է: Եվրոպական տարազ կրող բանսաստեղծն իր հոգերաշությամբ ու մտայնությամբ հիմնականում մնաց աշխատավոր դյուզացու երգիչը, դրա համար էլ նրան ոգեշնչման ազգակներ տվողը մնաց զյուղաշխարհայ այնտեղի բնությունը, սինամ հավերը, ոլացիկ սոսիները, ցորենի ճոճուն արտերը, թոնիրներից բարձրացող խաղաղ ծուխը և այդ բնության տարերքների հետ կոփի տվող ջանքեզար մաճկալն իր աշխատանքի ընկեր եղներով, յուր հովերդական կյանքով ու կենցաղով (Տես «Աշագյաղի Մասիներ»-ը): Քնարերգականաներին հատուկ եղանակով ոգեշնչելով բնությունն իսահակյանն իր եսմին է ծառայեցնում այս: Սիրո վիշտը ողբալիս բնությանն էլ է ժամանակից գարձնում այդ ողբին, առաջարկելով իր վիշտը ողբալ (տես՝ «Դարդս լացեք, սարի սմբուլ» և նման այլ երգերը):

Խնդության պահեր ապրելիս՝ այգախի արամազբությամբ է սովորում և բնությունը (տես «Երկինքն անամպ, ուրախ լուսին» և նման այլ երգեր): Բնությունն, ինչպես ասացինք, իսկապես իսահակյանի ստեղծագործություններում ոչ թե նկարագրվում է, այլ ճշշմարտապես ապրում է, սարերն ու ձորերը քուն են մտնում, երբ «գիշերվա կոպերն» են իշնում:

Կոպերն իջան լուռ գիշերվա,  
Սարին ձորին բերին քուն.

Մեկ ուրիշ երգում առավատյան արել մարդու նման իր շող ժամաներով սրբում է գիշերները լացող վշտատոչոր ուռենու արցունքները: Վերջապես ամպերն էլ իսահակյանի մոտ գիտեն իրենց ծարավը հագեցնել ջրով, ինչպես և մարդը.

Ամպերն ընկած ծովի վրեն,  
Հազար բերնով ջուր խմին:

Սա կոչվում է բնության շնչավորում, իսահակյանի հոգեհարապատ հայների մոտ էլ այդպես է, ծաղիկներն այնպես են ներկայացված, կարծես հարսներ լինեն, նրանք ծիծաղում, հերքիաթներ են պատմում իրար, ծառերն երգում են: Բնության այս ողեշնչումը հայների մոտ իր գագաթնակետին է հասնում «Մի եղելլի է կանգնած միայնակ» երգում:

Այսպես ուրեմն, որպես լիրիկ բանաստեղծ իսահակյանն էլ բնությունն արժեքավորում է իր վրա գործած տպագործության չափով: Բնության երգերը իսահակյանի ստեղծագործություններում, նրա գործունեության երեք տարբեր շրջաններում, հետեւյալ էվոլուցիան է ունեցել. առաջին շրջանում գրած այդ կարգի երգերից երեսում է, որ բնությունը իսահակյանի վշտերի ու խնդության բուժանորդն է: Հետագայում, 1905 թ. ուղղուցիային հաջորդող հասարակական կյանքի՝ գելադանում հաճախ այցելող մահվան գաղափարից վախեցող պոետը ըբ-

Նության պատկերով՝ տաղիս է՝ մահվան հանգերը. աևս «Տերեւներք կանգնիր թափ տամ» երգը. միաժամանակ աշխատում է բնությանը, փարելով, բնության հետ ձուլվելու եղանակով հեռու վանել իր մահականցու լինելու համոզումը Հնոտագայում Իսահակյանն իր երգերում արտահայտած պանթեիզմի դադափարը զարգացնելով՝ հանգում է այն բանին, որ ոչ թե աստծուն բնության մեջ պետք է փնտրել, այլ բնությունն ինքն է աստվածությունը

\*  
\* \*

Ավ. Իսահակյանի ստեղծագործություններում ուժգին հնչող մոտիվներից են՝ բնության և սիրո երգերի հետ՝ նաև հայրենասիրական նվազները. Ազատ հայրենիքի վեհ դադափարը զերել էր մեր երգին, պատանի հասակից, դառնալով նրա մշտական մտահոգության առարկան. «Պատանի հասակից» ինձ մշտապես հուզել է, մտալլկել է աշխարհիս մեջ զոյություն ունեցող չարեքը, աղքատությունը, տղիսությունը, բունությունը, շահագործումը, ոճիրները: Ինձ տանջել է հայ աշխատավոր ժողովրդի դառը վիճակը սուլթանի և ցարի դաժան լուծերի տակ և այդ չարեքները վերացնելու գործը, փրկության միջոցները»:

Հետեւով Իսահակյանի հայրենասիրական քնարի զարգացման աստիճանական ընթացքին՝ փորձենք ցուցյ տալ թե հայրենիքի դադափարը պատմականորեն ինչ էվլուցիս է ունեցել մեր հեղինակի այդ կարգի ստեղծագործություններում: Հայրենիքը պոեմի վաղ շրջանի գործերում (նկատի ունենք նրա 1898—1902 թ. թ. լույս տեսած բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուները) հիմնականում վաթանի (ծննդավայրի) հասկացողություն էր ի գեմս Արքա-չայի, Ալաջյազի և այլնի: Հետագա տասնամյակներում սակայն, երբ ամենուրեք նոր զարթոնք էր ապրում հայ ժողովրդի պատագրական պայմանը. այդ մթնուրուտում շնչող բանաստեղծի ստեղծագործություններում հայրենիքի դադափարը դարձել էր տերիտորիալ քաղաքական հասկացողություն: Բայց Իսահակյանի այդ շրջանի ստեղծագործությունները, լինելով պատմական ավելի ուշ էպոխայի հասարակական քաղաքական կյանքի արտահայտություն, երբ հայկական հարցը այլ ընթացք էր ստացել քան Բաֆֆու ապրած ժամանակաշրջանում էր, մեծ չափով պետք է տարբերվեին իր նախորդների նման երկեղությունը համարակական հայրենասիրական երգերից չէր կարելի լսել իր հայության վերաբերյալ՝ Պատկանյանի և այլոց ստեղծագործություններում Պաշող և լուսուրատանքը թշնամու գեմ, — հոխորտանք, որ բխում էր օտարերկրյա պետությունների արած «մեծ-մեծ» խոստություններից: Իսահակյանի ապրած ժամանակաշրջանը համընկնում էր հայ ժողովրդի ապրած արտամելու ու լալու օրերին, սկս օրերը ծնել էին սղո երգելու բանաս-

առեղծի մտահոգության առարկան էր ավելը ու ավելը դարձած հայրեանիքի և

Հրին, ջրին,  
Ու սրին կուր

գնացած հայ ժողովրդի դառը վիճակը: «Երգեր ու վերքեր»-ի հեղինակներն հոգին թունդ էր առնում, երբ լսում ու ականատես էր դառնում՝ սուլթանիզմի սարքած այդ եղեռնի կոտորածներին: Ի՞նչ էր մուռ նրան երգել, եթե ոչ

կոկիծ կոկիծ...

Մեր ըովանդակ ժողովրդի ընդհանրական դարձած վերքերն ու կոկիծներ դա, որ իր անձնականը համարելով, երգում էր իսահակյանը, ուսուի էլ ավելի էր մեծանում նրա հասարակական նշանակությունը: Նրան համազգացողների թիվը բազմապատկվում էր: Պոետի զործերը կարում էր մեր բավանդակ ժողովուրդը, որի Փիդիկական ոչնչացման ողբն էր երգում նա:

Հեյ ջան հայրենիք, ինչքան սիրուն ես  
Սարերէ կորած երկնի մովի մեջ.  
Զրերդ անուշ, հովերդ անուշ,  
Մհնակ բալեքը արուն-ծովի մեջ:

Զարմանալի է սակայն իսահակյանի պոեզիայի, ինչպես նաև ողջ հայ գրականության համար այն, որ ականատես լինելով հայ ժողովրդի շարունակական ջարդերին, լավագույն ապագայի տեսնչերը հայենիքի ամենածանր օրերին անգամ չչքացան: Այդ լավատեսությանն էր, որ հռւսախարության ու փոթորիկների մեջ անգամ տեսնել է: տալիս պոետին հայի բախտորոշ ապագան:

Հայոց գեղջուկներ, եղբայրներ հոգուս,  
Զեր արյունաղարդ արտերի վրա  
Դրախտի փայլով պիտի հուրհուրա  
Մեր աղատության ոսկի արշալույս:

Գալով իսահակյանի սոցիալական հագեցվածություն ունեցող երգերին, պետք է նկատել այն, որ բանաստեղծը իր ապրած գասակարգին հուսաբակության մեջ գոյություն ունեցող հակասությունները այնուամենայնիվ չէր ըմբռնել և ուղղուցիոն պրոլետարիատի տիսաննելուցց, ուստի և որքան էլ նա մտահոգված լիներ «սուրբ ճշմարտության հասնելու» (ուսի «Զայնս հնչում է խալարի խորքից» ստանավորը), չէր կայող հասնել այդ նպատակին այնքան ժամանակ, մինչև որ դուրս չգար այն բյուր ուղիների լաբերինթոսից, որոնք գալիս էին բանաստեղծի համար խորթ փիլիսոփայական ուսմունքներից: Պետք է ասել, որ բավական երկար ժամանակ պոետը

գեղեցից այդ ուսմունքների ճամբեքում և, սասաիկ հուսախարավուն  
ունակցիայի օրերին ընկազ հիշյալ ուսմունքների ջրապույտի մեջ  
ուր մասց այնքան ժամանակ, մինչև որ Հոկտեմբերի ալիքը ազակեց  
նշան այդ ջրապույտի մեջ խեղդվելու վտանգից, և այդ եղալի իռա-  
հակյանի գրական գործունեության երրորդ շրջանում, երբ նա իր այլ  
ժամանքի գործերում («Սասմա Մհեր», «Նրանք գրոշակ ունեն», «Հի-  
նական մեծ պարսպի երգը»), որոնց մասին կխոսենք իր տեղում։  
Վերջապես կարողացավ տառապող մարդկության ազատազրու-  
թյան գործը կապել սոցիալիստական և սուլուցիայի հետ իր գործունեու-  
թյան այլ և այլ շրջաններում արտահայտած խուլ բողոքները, այսպի-  
սով, բանաստեղծի գործունեության վերջին էտապում վերածվեցին  
գիտակցված հետեւողական պայքարի, Բայց անհարաժեշտ է նշել, որ  
ոչ իր գրական բեմիլի առաջին և ոչ էլ մանավանդ վերջին շրջանում  
հսահակյանի սոցիալական քննադատությունը չվերածվեց բնու-  
թյան և մարդկանց վերացական քննադատությանը, ինչպես կարծում  
է Կիրապոտինը։ Արժի, որ գրականության պատմագիրը դատավճառ  
կարգարուց առաջ ծանոթ լինի իր գրելիք նյութին և նյութից լը-  
խեցնի իր եղրահանգումները։

Մեզ մասց վերընծման ենթարկել մեր պոետի ստեհագործու-  
թյունների նաև այն մասը, որն առանձնապես գունավորել է նրա  
պոեզիան, վերքու երգերին թարմություն ու կենդանություն նե-  
րարկելով։ Խոսքը հսահակյանի ժողովրդական ստեղծագործության  
ողով գրված լիրիկական բանաստեղծությունների մասին է։

Ծնվելով երգաշատ Ելրակում, հսահակյանը դեռ մանկուց լսել և  
սովորել է պոետ ժողովրդի «Հայրենի աղբյուրի» վճիռ երգերը, որ  
կախարդում էին նրա ուշըն ու հոգին։ Մենք գիտմամբ նշեցինք  
հսահակյանի ժողովրդի ծնունդ լինելու հանգամանքը, որսինեւու ինչ-  
պես ինքն է ասում «ժողովրդի հանճարը ծնվում է ժողովրդի թանձ-  
ուության ճշշումից, ինչպես ադամանդը քարածուի ճնշումից»։ Եվ  
այդ ադամանդը, նկատում է պոետը, ժողովրդի զգացմունքների, նրա  
տեսչերի, երազների, նրա տառապանքների, նրա զայրույթների և  
կամքի խտացումն է և կոնկրետացումը։ Նրա մեջ արտացոլվում են  
ժողովրդի աշխարհը մբռնումը, նրա կենսագործումը։ Ժողովրդի ծո-  
ցից գուրս եկած և նրա բանաստեղծական երեանը հանգիստող հսա-  
հակյանը գիտե վերջինիս կարիքն ու հազար, նրա խինդն ու խանդլու

հսահակյանի ժողովրդական ստեհագործությունների ողով գըր-  
ված երգերում, ի շարս մի քանի այլ մոտիվների (սիրո աշխատան-  
քի և այլն) տեղ են գտել նաև պանդխտության հետ կապված կարո-  
ւի երգեր։ Սոցիալական այն չարիքը, որպիսին է պանդխտությունը,  
առարագությունը նոր երեսույթ չէր մեղանում, այն արձագանք է  
գտել մեր տակավին 13—14 րդ դարերի մի շարք հայրեններում։  
Անցյալ դարի 80-ական թվականներից պանդխտությունը, հըս-

Հայական չափերի է հասնում մեր իրականության մեջ; որի հետեանա-  
քով թե մեր ժողովրդական երգերաւմ, և թե գրականության մեջ  
ալելի մեծ չափավ ծայր են առնում ողանդխոսության հետ կապ-  
ված երգերը:

Պանդխոսությունն ալելի մեծ չափերի սկսեց հասնել 90-ական-  
տարբան թվականներին, երբ հանգես էր եկել իսահակյանը: Ճիշտ-  
է, նա ընդամենը մի տասնամյակով էր միայն գրական ասպարեզ  
իջում, քան իր ավագ զբակիցները, բայց այդ տասնամյակում,  
ինչպես ասեցինք, գյուղացիության քայլքայումը անհամեմատ արագ:  
Էր կատարվում և ուրեմն իր հանրային հարազատ հատվածի (գյուղա-  
ցիության) գոյավիճակը անհանգուտրեն տանջալի և պոռթկուն ապ-  
րումների աղբյուր դարձավ իսահակյանի համար: Հասարակական-  
կյանքի այս հոդից էր որ «Ճնավ» Ավետիք իսահակյանի ան-  
հանդիսա բնավորություն ունեցող նյարդոտ պոեզիան:

Բնականաբար, այդ պատմաշրջանի երգիչը, ավելի քան, իր ավագ՝  
գյուղակիցները (Հովհաննիսյան-Թումանյան), անհանգուտրեն, տան-  
ջալի ցավով պիտի երգեր իր վաթանի իր օջախի, իր սիրուհու կո-  
րուսոը ողբացող գյուղացու վիճակը, և նրա «Երգերը» պիտի համա-  
րեր իր անձնական «Վերքերը»: Համանման ապրումները ծանոթ են-  
եղել «Օխաը սարով», «Օխաը տարով» յարից ու հայրենիքից բաժան-  
բանաստեղծին էր Այդ է պատճառը, որ նրան հաջողվել է ամենա-  
խորը կերպով վերաբառողեր պանդխոսության մեջ գտնվող գյուղա-  
ցու հոգեկան ապրումները, նրա կարոտի բովանդակ զգացումը:

Օխաը սարով հեռաւ քեզնից,

Քո շվաքով ապրում եմ, յար.

Օխաը տարով բաժան քեզնից,

Քու կարոտով էրգում եմ, յար:

Մենակ պանդխոսող գյուղացին չէ, որ մեռնում էր իր յարին-  
տեսնելու անձկությունից: Նույն վիճակն է ապրում և տանը նստած-  
սիրահար գեղկուհին: Սա ևս իր յարի կարոտն աչքերի մեջ պահած-  
ունի և նույնպիսի անձկությամբ սպասում է «խաբրիկ մը» ստանալ-  
իր պանդխոտից, սակայն նրա սպասումներն ի գերե են ելնում, անց-  
նում է ցուրտ ձմեռը, բացվում են ճանապարհները ու դարձյալ «խա-  
բը» չի գալիս անձկալուց:

Ջմեռն անցավ, եկավ գարուն,

Հալավ բանձրիկ սարերու-ձուն,

Ճամբար բացվավ դարիքներուն,

Աչքս ճամբին՝ դադար չկա:

Ի՞նչ է մնում այս բոլորից հետո իր, «ղարիբ զուրբաթի» դարձը-  
տենչացող զեղջկուհուն, եթե ոչ արցունքի հեղիները. բաց թողնել-  
աչքերից.

Զուրն է պլթել՝ կուգա սարեն,  
 Սարեն, ձորեն... իմ աչերեն...  
 Մի նորոգիք սրտիս յարեն:  
 Դարձի վաթան,—հողն անուշ է.  
 Հողն անուշ է, ջուրն անուշ է...

Բանաստեղծ Խսահակյանն այստեղ վաթանի, հողի անուշության  
 գուղափարն է դնում, որ առկա է նաև բուն ժողովրդական երգում։  
 Ավետիք Խսահակյանը ժողովրդական ստեղծագործության ոգուի  
 գրած իր երգերում այն աստիճան է մոտեցել ժողովրդական լիրի-  
 կայի հորինվածքին, մտայնությանն և զգալակերպին, որ նրա այդ-  
 կարգի բանաստեղծությունները թվում են «անանուն երգիչների-  
 ստեղծագործություններ՝ նոր ժողովրդական երգերի սերիայով»։ Եվ  
 հիբավի, մեր ձեռքի տակ փաստեր կան, որ երբ շիրակցի գյուղացուն.  
 հարցընել են, թե ով է հորինել նրա ծոր տված երգը, նա փոխանակ-  
 երգի խսահակյան հեղինակ Խսահակյանին մատնանշելու, ինքնագոհ-  
 ասել է, մերն է, ժողովրդինն է. իսկ երբ Խսահակյանի անունն են  
 տվել, Շիրակացու «Հավատալը չի եկել»։ Դա, ինչպես Բրյուսովն է  
 ասում, «Ամենաբարձր պարզեն է, որի մասին երազել կարող է մի-  
 այն պոհանը»։

Խսահակյանի ստեղծագործությունները թե ժող. երգերի ոգուի  
 գրվածները և թե նրա ոեֆեկտիվ երգերը, վերին աստիճանի էմա-  
 ցիոնալ գործեր են։

Եվ որ նույնպես կարեոր է՝ իր սպլրածն ու զգացածն Խսահակ-  
 յանը կարողացել է վարպետ ձեռվ վերաբազրել պոետական բազմա-  
 թիվ հնարքներով։ Նրա կենդանի բանաստեղծական լեզվի մեջ ոչ  
 պատահականորեն մեծ անուշ ժողովրդական ոճերը, որոնք  
 զգայական լիցք են տալիս նրա երգերին։ Մասունք բանիներից օդ-  
 տագործված են մեծ չափով նաև զգայական բայերը, որտեղ խորքից  
 եկող այս կարգի ձայնարկությունները, «Հեյ-վախ», կոտրան իմ  
 թեկերը», «Ալս մեր սիրտը լիքը գարդ ցավ», «Վախ մեր օրը սկսով  
 անցավ» և այլն։ Բառերն ել Խսահակյանի մոտ հուզական և զգա-  
 յական լիցք ունեն։ Ահա այս և նման հնարքների շնորհիվ է, որ  
 Խսահակյանի երբեմն պատկերներից դուրի, աղքատ հանգերով գրված-  
 երգերն անդամ (որոնք, ի հարկե, պոետի անմիջական ապրած տրա-  
 մագրություններից են բխած), ինչպիսիք են՝ «Սիրեցի, յարս տա-  
 րան», «Ախ, իմ ճամբեն» և ուրիշները, չեն դադարում խոր հետք-  
 թողնել ընթերցողի հոգու վրա, համակելով նրան իր վշտով ու խըն-  
 դությամբ։

## ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՊՈԵՄՆԵՐԸ

### 1. ԱԲՌԻ-ԼԱԼԱ-ՄԱՀԱՐԻ

Բանաստեղծ Ավետիք Իսահակյանն օժագուծ է ոչ միայն քնարերգելու, այլ և վիպերգելու մեծ ձիրքով: Դրա լավագույն ապացույցն են նրա՝ «Արու-Լալա-Մահարի», «Սամա Մհեր», «Մեր նախահայրեր» խորագրերը կրող գործելու:

Այս պոեմներում Իսահակյանը զալիս է մի կողմից ամփոփելու այն, ինչ երգել է իր այլ և այլ քնարական գործերում, մյուս կողմից ընդգրկում է այնպիսի նոր բնագավառներ, որոնք մինչ այդ գուրս էին մնացել նրա լիրիկական ստեղծագործությունների տեսագաշտից:

Իսահակյանի պոեմներից ժամանակադրական կարգով ամենից առաջ գրգածը հանրահնչակ «Արու-Լալա-Մահարին» է:

Մահարուն ստեղծող Իսահակյանը, տասնյակ տարիներ ապրելով, բուրժուական հաստրակարդում, ըմբոշինել էր արդեն կյանքի մինչև մըրուը դառնություններով լի բաժակը և երբ «շեղը հասավ ոսկորին», խորապես խոռվեց նրա բանաստեղծական ոգին, ու «մի գիշեր, երբ շատ լքված էր և սրտարեկ՝ գուրս հանեց երեակայության միջից քաջազնաց ուղտերի մի քարավան ընտեր սարքով, և մինչև Քաղցադը քուն էր մտել Տիգրիսի նոճիածածկ ափերի վրա, զաղոնի հեռացավ քաղաքից»: Այսպես է բանաստեղծորեն ավետում Իսահակյանը իր պոեմի ծնունդը: Մեր վերլուծման ընթացքում ընթերցողը կնկատի, որ մենք Մահարուն նրա հեղինակի միջի համախ հավասարության նշան ենք դնում: Պատճառն այն է, որ Մահարին հենց ինքը Իսահակյանն է, նրա բանաստեղծական զառ ու զարմանք երազների հարազատ արգասիքը: Մենք դիտմամբ շեշտեցինք ույն հանգամանքը, որ Մահարին Իսահակյանի և ոչ այլ ոքի մտքի ծընտունքն է, շեշտեցինք նրա համար, որ կարծողներ չլինեն, թե Մահարու այսուժեն իրոք պատմական է, և իրը Իսահակյանը վերամշակել է այն: Բանաստեղծի կողմից պոեմում ստեղծված պատմական տրամադրություններն այնքան վարպետորեն են արված, որ հաճախ ոչ միայն հարկանցի ընթերցողը, այլև գրականագետները կարծում են, թե պոեմը իրոք պատմական կանվա ունի: Պատմական են այս պոեմում երկու փաստական մոմենտ միայն: Դրանցից առաջինը պոեմի հերոս Արու-Լալա-Մահարուն անունն է: Արու-Լալա-Մահարին Սիրիայի Մահարա քաղաքում ապրած 10-րդ դարու արար բանաստեղծ էր:

Երկրորդ փաստական մանրուքը, որ նույնպես պատմական Մահարու անվան հետ է կապված, գա արար բանաստեղծի գիրեզմանի վրա գրված այս երկողն է: —

«Իմ հայրը իմ զեմ մէղանչեց, սակայն չմեղանչեցի ևս ոչ ոքի դեմ»:

Հասարակական-քաղաքական կյանքի վայրէջքի շրջանում դրված իսահակյանի այս պոեմի հիմնական նպատակաւացքն էր, ինչպես այլ առիթով՝ Լըքոնդ-զը-Լիլն է ասել «իդեալական կյանքը տալ նրան, ով իրական կյանքը արդեն չունի», Կատարյալ բաղձալի կյանքի սիմվոլը, որ հակագրությունն է այս երկում իրական կյանքի, տրված է Շեմս արեի պատկերով։ Այդ բանը հավաստում է և ինքը՝ բանսատեղծը։

—«Սալամ քեզ, արև, շյուքը բյուբարյուր, զու աստծուց հզոր, զու կյանքի ազրյուր».

Ի՞նչու է հակագրում բանսատեղծն իրական կյանքին իդեալականը և ո՞րն էր այդ իրական կյանքը, «ո՞ր գեհեն էր անվանում»։

Մահարին՝ Դա բուրժուական հասարակարգն էր, ուր ամեն ինչ սրբագործվում էր փողի միջոցով։ Փողն էր այն հրաշագործ արարիչն ոյց «ասպերատ աշխարհում», որ զողին դարձնում էր «ազնիվ ու շիտակ», «ասպուշին՝ հանճար, վախկոտին՝ կորիճ, տգեղին՝ չքնաղ և պուռիկին՝ կույս»։

Մահարին իրեն ինդիվիդուալիստ ասում ու փախչում էր ոչ միայն օրենքներից ու իշխանությունից, այլ և հայրենիքից, ընկերոջից, սիրուց, մի խոսքով՝ այն ամենից, ինչ այնքան նվիրական ու թանգ էր նրան։ Սակայն նկատի ունենալով կոնկրետ բուրժուական հասարակությունը, բանսատեղծը որպես իդեալիստ ընդանրացնում էր այդ հասակացողությունները և նզովում առնասարակ ամեն մի օրենք ու իշխանություն, ընկերոջը, սիրն ու մարդուն։ Նա փախչում էր սրանցից, որովհետև այդ սրբություններն էլ պղծվել էին կապիտալիզմի հեղձամբնուկ շնչից ել ահա թե ինչու կամա թե ակամա բանսատեղծը ցավ պիտի զգար, որովհետև բննագաւատում էր իր համար երրիմնի նվիրական, այժմ սրբապղծված բաները։

Մահարին ավաղ է ասում, ափսոսանքով է ատում և հայրենիքը, բայց ատում է, որովհետև նա դարձել է «ցոփ հարուստների պերճ արոտավայր», «որի հողն արնոտ անդուլ հերկողը», այսինքն հողի ազնիվ աշխատավորը, «չոր քար է կրծում իր հալալ հացի հանդեպ»։ Այդպիսի հայրենիքի հասցեին նզովք է կարդացել և հայրենասեր Հայնեն։

Անեծք, կեղծ ու սուս հայրենիք, և քեզ  
Ամոթանքի և գարշության կը կես,  
Ուր ամեն ծաղիկ վաղ է թառամում,  
Ուր ծուռությունն ու ոճիրն են սնվում։

Միսալ կլիներ ասել թե այստեղ բանսատեղծը առհասարակ հայ-

բենիքի գաղափարի գեմ է դուրս գալիս և «անզուգականորեն պատռում նրա քողը»: Այդպես են հասկացել ոմանք Մահարու վերոհիշյալ տողերը: Իսահակյանը, ինչպես և Հայնեն երեք չի ատել ազատ անազարտ հայրենիքը: Հակառակը, նա իր գործունեության բոլոր շնչաններում գովերգել է հայրենիքը: Բանիվ, գորչով, զորավիզ է կանգնել նրան:

«Արու-Լալա-Մահարի», պոեմում Ավ. Իսահակյանն անարգանքի այունին է գամում նաև բուրժուական հասարակարգի թագն ու պատկը հանդիսացող «մարդակեր մարդուն»:

Տեսնելով, որ զանց են առնվում անիրավ աշխարհում իրար չը- հոշոտելու խրատները, զառնացած բանաստեղծը խարանում էր ոչ միայն մարդուն, այլև ընկերոջն ու մանավանդ հորը: Վերջինս է, որ հայր դառնալով, պատճառ է զառնում կյանքի կոչելու նոր սերնդին, նրա զլիսին ևս վառելով «գեհենն այս կյանքի»: Հասկանալի է որեմն, թե բանաստեղծն ինչու է այսպիսի խոսքեր ուղղում ծնողի հասցե- ին.

Սրիկա է նա, ով հայր է լինում, ով երանալիս ծոցից՝ ոչնչի՝ Գոյության կոչում թշվառ հյուկեին և զլիսին վառում գեհենն այս կյանքի:

Որովհետև «Ժամանակը դուրս է եկել իր շավիղից» (Շեքսպիրի արտահայտությունն է), ուստի ոգինեմ բախտի տեր են լինում Մա- հարու նման բոլոր նրանք, ովքեր կամենում են ուղղել այն եղ- միայն դրա համար, և այդ պայմաններում բանաստեղծը չի ցանկա- նում, որ աճի մարդկային սերունդը:

Մարդ հասկացողությունը իսահակյանի ստեղծագործություններում պատմականորեն հետեւյալ էլուրոցիան է ունիցել իր գործունեու- թյան տակավին վաղ շրջանում՝ 1890-ական 1900-ական թվական- ներին՝ բանաստեղծը ժխտական վերաբերմունք հանդես բերեց մարդ- կանց միայն մի որոշ շերտի նկատմամբ: Դրանք հարուստ մարդիկ էին, որոնք փողի ուժով խլեցին պահտի սիրածին, որոնք անխնա- շահագործման էին ենթարկում «քարից, հողից հաց քամող» խեղճ- աղքատին: Հաջորդ ավելի նոր սոցիալ-պատմական ժամանակաշրջա- նում, հասարակական կյանքի անվճան ու սեակցիայի պայմաննե- րում գրած «Արու-Լալա-Մահարի»-ի մեջ բանաստեղծը խստագույն- ատեց այս անգամ զրեթե ընդհանրապես մարդուն: Սակայն ունակ- ցիայից շատ հետո, հասարակական նոր պայմաններում «Մահարու» մեջ խստագույնս դատավետված մարդը, անցնելով բանաստեղծի քննադատության քարավանով, կամաց կամաց վերածնվում է:

Պետք է ասել, որ «Արու-Լալա-Մահարի»-ն դրելիս Ավ. Իսահակ- յանի սուբեկտիվ աշխարհը գտնվելիս է եղել խոռվանույզ, փոթորկոս վիճակում, այդ մասին հիշեցումներ է անում և ինքը իսահակյանը՝

«Հոգով խռով էր Արու Մահարին» կամ «այսպես էք խոսում զայրացած սրտում Արու Մահարին մեծ բանաստեղծը» և այսպես շարունակ:

Այսքանն նկատի ունենալուց հետո դժվար չի հասկանալ թե ինչպես է, որ սիրո ամենամեծ զովերգութերից մեկը՝ Խահակյանը, Մահարու բերանով այսպիսի խոսքեր է զգըտում գեղեցիկ սեփ հասցեին:

Ո՞հ, կնոջ մարմին, պազըտ, օձեղեն, դիվական անոթ,  
ոճիրների չար-  
Դու, որ մսեղեն գառն հաճույքով արել հոգու  
դարձնում ես խավար,

Ասում եմ կնոջ՝ տարերքը, կրքի, միշտ բեղմավորող  
եղեննը անսանձ,

Աղբյուրն անսպառ, որ կուտակում է աշխարհի վրա  
տիղմը չարության:

Կինն Խահակյանի վաղ ըրջանի ստեղծագործություններում օջախի սրբության սիրմվող էր (տես «Արագի ափին բոստանս լինի», «Մաճկալ և բեղարած են»), Սակայն սոցիալ-տնտեսական հետագա ըլջունում, արդյունաբերական կապիտալիզմի վերջին գրահի հետևանքով վերջնականապես փլված օջախի հետ աղարտվեց և այդ օջախի սրբություն սրբոցը համարվող կնոջ բարոյական գեմքը: Եվ ինչպես սրբականք, սեակցիայի պատմաշշանում, «Ազուշալաւ-Մահարդեն տեսանք, սեակցիայի պատմաշանում» ամամար «հաճույքի բերակի մեջ այդ կինը ախտավոր բուրժուագիւայի համար մաքուր տապուտր» է դարձել: Պոետի երթեմնի ընտանեկան մաքուր գաստը «ճահիճ մահիճ» վերածվել: Այդ կերպ և այդ պայմաններում կարող էր «անբիծ կնոջ» երգիչն իր հոգու ամբողջ թափով ծառսկարող էր պատմագի գեմ: Սիրո, երգիչը շանթահարի է նման «Արուչինել այդ վտանգի գեմ: Սիրո, երգիչը շանթահարի է նման «Արուշալայ»-ի մեջ, որովհետև նրա ամենամեծ իմաստներից մեկը թաթախվում է անհուն կրքի մեջ. սակայն աստվածային կնոջ իդեալապահը մինչեւ անհուն չի դադարում փայտայել իսկ հնատագա ըրջանի ստեղծատակավին չի դադարում գործություններում: «Լիլիթ», «Բանաստեղծի երազը», «Հավերժական գործություններում» միենալուն կերպարը իսկահայանի համար դարձավ՝ սերը» պոեմներում միենալուն սիրմվողիկ արտահայտությունը: Հավերժական անբասիր սիրո սիրմվողիկ արտահայտությունը:

Հետաքքրական է նշել որ ամեն բանի գեմ ծառս եղող, մինչև իսկ հոր գեմ իր հուձքը թափող Մահարին ունեցավ մի սրբություն, որի վրա չհանդգնեց ձեռք բարձրացնել: Այդ սրբությունը, մայրն էր, գործակութ ու սիրաստւն Ալմաստը, որի դեքմը չէր կտրողացի աղարտել ոչ կապիտալիզմը, ոչ իշխանությունը և ոչ այլ ոք:

Մոր պատկերն այս պոեմում ընդունված է որպես ազնվության, անհաջառության խոհրդանիշ։ Այն ամենը, ինչ բնության մեջ ամբասիր է համարում պոետը, համեմատում է միայն և միայն մայրական ջերմ գրկի հետ։ Այսպես օրինակ, գիտելով արեին, բանաստեղծն ասում է.

«Դու, միակ իմ մայր, մայրական դու գիրկ, դու միայն բարի,  
դու միակ սնուրը, սնուր»,

Բնությունը մայրական գրկի հետ համեմատող բանաստեղծն իր այս պոեմում երեան է հանում յուր սերը գեղի այդ երկրորդ մայրը՝ բնությունը։

Իսահակյանի ոչ մի այլ գործում պանթեզմը, փիլիսոփայական առումով, այնքան ուժեղ արտահայտություն չի գտել, որքան «Արուելաւ-Մահարի»ի մեջ։ Բանաստեղծը խիզախում է աստղերի լեզվով կարդալ լուսության երկինքը (իմա տիեզերքը. — Հ. Դ.) Աստվածության գաղափարը բանաստեղծն ընդունում է բնության մեջ, արեւ մեջ, ամենազոր աստվածն ինքը մայր բնությունն և և ուրիշ ոչ ոք Դիմելով արևին՝ պոետը բացականչում է։

«Դու—աստծուց հզոր, դու միակ իմ սեր, դու միակ իմ մայր,  
մայրական դու գիրկ,

Դու միայն բարի, դու միայն սուրբ, սուրբ, դու գերահրաշ,  
միակ գեղեցիկ»։

Որպես հակագրություն այդ մզձավանջային կյանքի, որից փախաչում էր Մահարին, իսահակյանը կառուցում է անիրական, անթերի ու բարօրիկ կյանքի իր իդիալը, սիմվոլացնելով այն Շեմսարեկի պատկերով։ Պետք է շեշտել, որ կյանքի նկատմամբ հոռետևու չեր Մահարին, ինչպես կարծում են ոմանք, այլավես նա անհրաժեշտություն չեր ունենա ձգտել անթերի կենաց։ Անկարելի է համաձայնել նաև այն քննադատների կարծիքին, ըստ որոնց իսահակյանի պոեմի ներքին իմաստն առանձին կարեռություն չունի։ «Արուելաւ-Մահարի» պոեմի «ներքին իմաստը» ունակցիայի ժամանակաշրջանի գահագեծ անկման գիմող հասարակական-քաղաքական կյանքի պատկերումն է, հետևաբար և նրա զլխավոր արժեքը չի սահմանափակվում սոսկ՝ «գեղեցիկ նկարագրություններով», «Շեմսարեկի գովքով»։

Պետք է շեշտել նաև, որ թե մյուս ստեղծագործություններում և թե այստեղ բնությունը բանաստեղծի հոգու թարգմանն ու վշտերի ամոքողն է։

«Վիշտդ տուր հովին, քայլիր բնության ծոցը մայրական և մի նայիր ետ»։

Ասում է մահարին իր ընթացող քարավանին Ասացինք, որ ընուն  
թյունը Մահարու հոգու թարգմանն է:

Այսպես, օրինակ՝ երբ ռհաշտ ու պայծառ է Մահարու դեմքը, և  
հոգին անգորգած, բնությունն էլ համապատասխան կերպով է պատ-  
կերգում: Զեր առաջ բացվում է գեպի անապատ տանող Մահարու  
քարավանի չքնաղ ճանապարհը, զարգարված նարգիզներով ու նոճի-  
ներով, որոնց հեղաճկուն իրաններն է օրորում զեխյուռը իսկ երկըն-  
քում՝ Մահարու քարավանի նման՝ սիգաճեմ ընթանում են գիշար-  
աստղերի քարավանները:

«Պոհար աստղերի քարավանները թափառում էին երկնի  
ճամբեքով,

Եվ դողանչում էր ողջ երկինքն անհուն՝ աստղերի շքեղ,  
անշեղ դաշնակով»:

Հենց մի փոքր Մահարու մտքի արել երեւմ է թե չէ, էլի ու-  
սի խոհելը սողոսկում են այնտեղ, փոթորկում նրա ներաշխարհը:  
Համաձայն Մահարու փոթորկված էությանը՝ բնությունը ևս խովա-  
նույց սանձակուոր վիճակում է ներկայացգում.

Խոլ կայծակները հրեղեն սրով ծվատում էին վաշտերն  
ամպերի,

Եվ արշավասույը՝ փշովում էին ճերմակ բաշերին հեռու  
լեռների:

Նկատենք և այն, որ բանաստեղծը երբեմն էլ դիմում է հակառը-  
րության՝ Մահարու ներաշխարհի և բնության միջև: Պատկերը կեր-  
տելիս նա տեղին է օտտագործում իր ներկապնակում եղած բաղմա-  
պիսի գույները: Այսպես օրինակ, երբ մառ անապատի վրա հասնող  
դիշերն է պատկերում, պոետը դիմում է ունեմբանդյան դաժան ու  
ահասաստ ներկերին՝ ընդդիլու համար գիշերվա սասարիկ մթամա-  
ծությունը:

«Գիշերն ահարկու և սև ու հսկա մի չղջիկի պես թևերը փոեց,  
Անձիր թերերը իջան, ծածկեցին քարավանն, ուղին ու դաշտերն  
անափ:

Եվ հորիզոնից մինչև հորիզոն երկինքը լցվեց մռայլ ամպերով,  
Զէին շողշողում լուսինն ու աստղեր, խալարն՝ ասես թե՝  
պատած խալարուզ:

Ուրիշ անգամներ, երբ պոկտը նկարագրում է մեծ անապատի  
արևածագը, նա դիմում է ռաֆայելյան պայծառ գույների օդուն-  
թյանը,

«Հորիզոնները հրդեհվում էին իրենց ամայի ազատ ափերում՝  
Մութը հավաքում էր քղանցքը թափշա, բոցերով բոսոր  
երկինքն էր ծփում:

Հաղար ու հաղար հբաշալիքներով Շեմսարեկը ելավ՝ շքեղ,  
լուսավառ, վարդի, սնդուսի բյուր  
պարուրներով:

Գույներն այստեղ այնքան են վառ ու կհնդանի, որ սուրահնեա-  
րից անապատի բարկ արեկ կիզիչ ճառագյթները կարծես թափան-  
ցում են հոգու խորքը և շոգ ես զգում, ինչպես Մ. Սարյանի արեկ-  
քը պատկերող նկարները դիտելիս: Ճշմարիտ մեծ արվեստագետը  
տալիս է իսկականի անապատի պատրանքը:

Արեկին հասնելու հավատը, ինչպես ասել ենք, անխորտակելի է  
պուետի հոգում: Այդ հավատքի հզորությունն է պատճառը, որ ամե-  
նից ավելի հաջող է գուրս եկել պոեմում ոսկի արեկ ներբողը: Բա-  
նաստեղծի մտածողությունն այստեղ ավելի պատկերավոր է ու տվելի-  
լարված: Այդ պատկերներն անջնջելի են մնում մարդու հիշողության  
մեջ: Հիշենք անապատի գեղին շեղջերից Մահարու աչքերին նայող  
շեկ առյօններին, որոնց ոսկեղեն բաշերից հողմը կայծեր է պակռում:  
Հիշենք Մահարու՝ խելակարույս ճախրանքով գեսի արեկը սլացող ուղ-  
արի քարավանի նկարագիրը:

Բանաստեղծի մտածողությունը պատկերավոր է ու գեղեցիկ,  
արեկլյան երանգ ունեցող լեզուն՝ փարթամորեն հարուստ ոճը, գու-  
նդը, ինքնատիպ, բայց մանավանդ ափորիստիկ:

«Սրիկա է նա, ով հայր է լինում» կամ «ծանոթ չները չեն հա-  
ջում վրադ, ծանոթ մարդիկ են հաջում քո վրա»:

Լեզվի ճոխության ու ոճի ինքնատիպության հետ մեկտեղ ու-  
շագրության արժանի է այս պոեմի նաև չափը:

«Աբու-Լալա-Մահարին» գրված է չորսունյատ 20 վանկանի ո-  
տանավորի երկար ու դանդաղ չափով, որ շատ հարմար է գալիս նրա  
քարավանի գնացքին. «Զեին մեջ կարծես ուղարկեն են, որ կքալեն»  
իրավացիորեն նկատում է արևմտահայ մի քննադատ:

Մեր քննադատական զրականության մեջ իրըև «Աբու-Լալա-  
Մահարի» պոեմի թերություն նշվել է այն, որ Մահարին «միենույն  
միտքը ծամծմում է պիսակներով և քանի որ ամբողջական պոե-  
մի տոնն էլ սկզբից մինչև վերջը լարված է ու հանգիսավոր, այդ  
ձգձգվածությունը հոգնեցնում է ընթերցողին և թուլացնում է պոե-  
մի թողած տպավորությունը»:

Պետք է ասել, որ Մահարու դատողությունների մեջ հոգերանո-  
ւրեն չեն էլ կարող չլինել չկրկնվող կոկ ու հավաք մտքեր: Պոետի  
ժամանակավոր և արտակարդ արամադրություններից ըխած այս  
պոեմի հերոսը հեռու է կյանքն ու շրջապատող երեսյթները սառնա-  
սրտությամբ քննադատող փիլիսոփա լինելուց: Այդ «թերություննե-  
րով» հանդերձ՝ իսահակյանի «Աբու-Լալա-Մահարի»-ն, ինչպես գի-

առենք, ամենակարճ ժամանակամիջոցում հայտնի գարձավ ոչ միայն մեր գրական հասարակության ամենալայն շրջաններին, այլև ահազին աղմուկ հանեց ոռուսական և եվրոպական գրականությունների մեջ: Իսահակյանի այս պոեմը թարգմանվեց ոռուսերեն, անգլերեն (հատվածներ), ֆրանսերեն, իտալերեն, ճապոներեն, գերմաներեն, եբրայերեն, լրացերեն, իսպաներեն, արաբերեն և էսպերանտո լեզվով: Իսահակյանի ժամանակավոր այդ տրամադրություններից բխած ապրումները հասկանալի ու մոտ էին ոչ միայն մեր, այլ և ոռմանտիզմի, նեռոռմանտիզմի, սիմվոլիզմի շրջաններն ապրած եվրոպական և ոռուսական գրականությունների համար: «Արուելալա-Մահարիմ» մեծ արքածման նպաստող հանդամանքներից մեկն այն էր, որ պոեմը, բացի բարձր արվեստով գրված լինելուց (որ հիմնականն է), իր շոշափած հարցերով էլ դուրս էր գալիս ազգային նեղ սահմաններից և թևակոխում համաշխարհային գրականության պանթեոնը:

## ՍԱՍՏԱ ՄՀԵՐ

Ա.վ. Իսահակյանի «Սասմա Մհեր» վիպերգի սկզբնաղբյուրը մեր ժողովրդական վեպի Մհերի ճյուղն է: Վերջինս՝ ամբողջ էպոսի հետ միասին՝ գարձել է ստեղծագործական այն ատաղծը, որի հիման վըքա Իսահակյանը բոլորպին յուրահատուկ ձևով կերտել է իր սքանչելի վիպերգը: «Երբ ձեռնարկեցի Սասունի էպոսների վարիանտների մեջ՝ վրում է Իսահակյանը, — բյուրեղացնելու համար Մհերի կերպարը, Սասունի հզոր տան վերջին ժառանգ Մհերը կանգնեց իմ առաջ, իրոք համամարդկային մի հոյակապ սիմվոլ, գրեթե եղակի համաշխարհային բոլոր էպոսների մեջ»:

«Սասմա Մհերը» գրիփս Իսահակյանը հիմք է ունեցել ոչ միայն մեր էպոսի Փոքր Մհերի ճյուղը, այլ ամբողջ վեպը, գրահետ միասին նկատի է առևլ նաև մեր հնագույն վիպական երկերը: Օժանդակ նյութեն տվել մեր բանաստեղծին իր վիպերգը գրելիս նաև մի շարք այլ ժողովուրդների էպոսները՝ հունականը, գերմանականը, ոռոսականը, պարսկականը, ֆիննականը, հնդկականը և շատ ուրիշները:

Տարիներ շարունակ ուսումնասիրելով ժողովրդական վեպի Մըհերի բնագրերը՝ Իսահակյանը նախ եղբակացության, որ Մհերը մեր գեղում միտված է գեղի չարը:

Դեռ 1901 թվին թումանյանին ուղղված իր մի նամակում Իսահակյանը Մհերի մասին գրել է հետևյալը: «Մհերը խոշոր տիպ է, բայց չարիթե, բացասական գեղունական, նրա վրա շատ պիտի է, բայց չարիթե, բացասական գեղունական, նրա վրա շատ վատ անմիտա: մտածես, մանավանդ, որ կիսատ է, իսկ գերջը շատ վատ անմիտա: Այդ ըմբռնումը ուժեղ կնիք է գրել Մհերի կերպարը կերտելու Իսահակյանի առաջին փորձերի վրա: Եվ իրոք, «Սասմա Մհերի» առաջին հրատարակության մեջ (1919 թ.) Մհերը «Խեռ բնույթքով» է հան-

դես բերված։ Տարիներ անց, վերստին ձեռնարկելով նույն գործի մշակմանը, Իսահակյանը շատ ուրիշ փոփոխությունների հետ փոխեցնակ Մհերի չար բնույթքը։ Մեր բանաստեղծն այս անգամ չհաշտվեց ժողովրդական էպոսում տեղ գտած քրիստոնեական աշխարահայացքին, որը հեթանոս հայոց բարի, ազնիվ Մհերին, հայ Պրոմեթեոսին, արագիոսել ենթարկել էր դիմացման։ Եվ հավատարիմ մնալով մեր ժողովրդական վեպի ողուն՝ Իսահակյանը Մհերին այս անգամ դուրս բերեց իր ոկղոնական էության համաձայն, այսինքն՝ որպես «վես բնույթքի» դյուց ազն։

Վես էր բնույթքը, խիստ ու ըմբռոտ,  
Հրով, խանդով վառ,  
Զայրույթօի պահին՝ մլար ու մթար,  
Հանց որ նեմըութ սար!

Հասարակական կյանքի մթնշաղն է զա, երբ մարդ երազների մեջ է որոնում այն, ինչ չկա իրական կյանքում: «Այն արվեստը, — զբում է Պլեխանովը, — որ ձգտում է այն բանին, ինչ չկա աշխարհում, ստեղծագությամբ»: Իր սիրո երդերի երկրորդ շրջավում է դժգույն անկարողությամբ: Իր սիրո երդերի նորից այդպիսի դժգույն անսում բանաստեղծ նորից նոր թեակոխում է այդպիսի դժգույն անսում բանաստեղծ նորից ապրութիւնների նոր շրջանը: Մենք կարողությամբ ստեղծագություն խոսում ենք Տերյանի «Ասկի հեքիաթ» բանաստեղծությունների երգաշարի մասին, որի բնաբանն է դարձրել պոետը Տյուտչի «И новый мир увидел я ...» խոսքերը: «Ասկի հեքիաթ» երգերի այս շարքը սկսվում է «Հասական» խոհական բանաստեղծությամբ. ուր

պոետն իր ապրումների անցած ուղին է տալիս՝ հրաշք տղջկա երազ  
զի հայտնությունը, ապա այդ երջանկության պատրանքի վերացումը՝  
և վերջում նորից ճիշով արթնացած հոգու (ոսկի հեքիաթը) հարությունը:  
Պոետն այդ «Հատված» երգում սիրու նետում է «քարին  
ու ջրին», հոգին խառնում «աստղերի երգին», այսինքն խառնու-  
վում բնության հետ, դրանով իսկ միանում իր ասած «հավիտենու-  
թյանը», ուր նրա առաջ բացվում են կարծեցյալ լուսնիկների ոս-  
կի դռները.

Ես գիտեմ լուսեղեն մի երկիր,  
Ես գիտեմ զյութական մի հոգիտ,  
Ուր հոգին թափում է վշտակեր  
Իր թերը ու հագնում է ժպիտ:

Ի՞նչ անհրաժեշտություն զգաց պօետը նորից ստեղծելու լուսե-  
ղեն երկրի «Հրաշք աղջկա» պատրանքը: Զէ՞ որ նրա ևսը մենակ  
մնալով իր գնացած «երկնածին» անուրջների պատճառով թափիծ  
զգաց (не добро быть человеку едину): Դրա համար էլ պոետը հորիւ-  
նեց ֆանտաստիկ այնկողմանի բնազանցական աշխարհը, որ «բարձր»  
էր կանգնած երկրային անգոն կյանքից: Այս եղանակով է հակադըր-  
վում Տերյանը բուրժուական վարսոց իրականությանը, մարմնեղ-  
կոնջը, և իր վշտակիր հոգին «հազնում է ժպիտ» «ոսկի հեքիաթի»  
«լուսե աշխարհում» միայն:

Պետք է նկատե՛ որ Տերյանն իր սիրո երգերում արտահայտել  
է և իր ժամանակակից ինտելիգենցիայի որոշ շերտի հույզերն ու  
ապրումները, եթե այդ երգերը բանաստեղծի սոսկ անհատական-  
անձնական ապրումների տրաստիք լինեն, ինչպես կարծում են-  
ումանք, այն ժամանակ պոետը համզպացողներ չեր ունենաւ:

Տերյանի սիրո երգերի մասին խոսելիս պետք է նկատել  
և այն, որ նրա այդ կաթողի երգերը «չանրեղոր մաճկալի սիրո երգը»  
չեն իր յարին» ձոնված:

Տերյանը մեր բանաստեղծական գրականության մեջ լսկական-  
ուրբանիստ բանաստեղծ է: Ինչպես իր այլ կարգի ստեղծադրություն-  
ներում, այնպիս էլ «Կապի» զրախոսը՝ բանաստեղծություններից  
ցիկլում նա երգի է քաղաքի կոչը: Մեր զրականության մեջ Տեր-  
յանն է, որ առաջին անգամ, ուսւ և եվրոպական նեռումանտիկների-  
նման, սալոններում հանդես եկող տիկիններին դուքով է զի-  
մում, երգում նրանց մեղկությունից փափկուծ մարմարյա ձեռները-  
այսպիսի փաղաքուշ խոսքեր ուղղում նրանց հասցեին:

Ո՞վ կարող է չըսիրել Ձեղ,  
Չըստրկանալ Ձեր կամքին,  
Ո՞վ կարող է հլու և հեղ  
Չաղոթել Ձեղ, ո, Տիկին:

Ի գեղ ուշագրավ է Տերյանի հայնեական սարկաստիկ մոտեցումը. սալոնական տիկնորջ գիրկը «Կատավի գրախտ» է անվանում՝ պոետը Նրա այդ գալանտ երգերում հանդես եկող կանայք զիտենարկեսով մատուցում է առաջարկ տակից զննական Հայացքով նայել պարոններին, ինչպես նաև հուզվել հին բուլվարային արկածներով լի սիրավեպերից, որ ի գեպ, ափելի թերթում են, քան կարդում, իսկ պարահանդեսների ժամանակ գաշնամուրի, վալտորնի հնչյունների տակ կարողանում են վարժ ձեռվ վայս պարել, օրորեւով իրենց հեղանկուն իրանները Տերյանի այս կարգի երգերում, ափելորդ է ասել, ոչ ովարդ Շիրազի բայաթին» կարելի է լսել և ոչ ել տեսնել «Դյուզի ամբոխին» զնուով ու զունայով հրճողութ

Տարիներ շարունակ ապրելով արդյունաբերական մեծ քաղաքաներում, ինչպիսիք են՝ Մոսկվան, Պետերբուրգը, Տերյանն իր հոգեքանությամբ վերափոխվել ու դարձել էր քաղաքի երգիչ և իր պոեզիայում քաղաքային հոգերանություն ունեցող գումարուկ զեմքով մարդու բարդ ապրություն է պատկերել, նրա նյարդու և հոգնածքեմքը գծագրել է Մեծ քաղաքի ժխոր առօրյայի մեջ, պոետը ամենուրեք տեսել է քրյուր մարդիկ անձանոթ ու պատ գեմքերով», ուստի զգացել է իրեն մենակ որպես «արտում անապատում» կզզար. Տերյանի այս կարգի բանաստեղծություններում երդվել է նաև քաքար աղքատիկ բնությունը, և այն գեղույն պատկերներով՝ որպես քաղաքի բնությունն է՝ պատուի ծածկված վահան ծառերը», սալահատակված մայթերը և թաց բուլվարները, «արքայական արյունաներկ պալատները», էլեկտրական լույսով ողողված «բարձր տները», սլաղող ավտոները, հոծ բազմությամբ լեցունկերները, ինչպես տեսնում ենք, Տերյանն իր ստեղծագործություններում առաջնահանդիս գողմանիորեն է շոշափել մեծ քաղաքի զարկերակը, ներում բազմակողմանիորեն է շոշափել մեծ քաղաքի զարկերակը, երգել «խենթ փողոցների երգը», ունկնդիր եղել ինչպես և այլ ուրեմնիստ պոետները (Քրյուտովը և ուղիւները) վիթխարի քաղաքի սիմֆոնիկ համերգին, ուր

Ամենի ձայնով երկաթն է խոսում,  
Պողպատն է ճշում շաշչունով դողդոջ.

Մինչ Տերյանը, մեր պոեզիայի մեջ ոչ մի ուրիշ պոետ այսպես չի երգել քաղաքը, վերջացնելով միը խոսքը Տերյանի ուրբանիստական երգերի մասին, պետք է նկատել հետեւյալ էվոլյուցիան: Իր վազ շրջանի սանդակապահ մագործություններում, երբ տակավին բանաստեղծն իր ծննդավայրի ծագործություններում, երբ տակ էր և հոգերանորեն էլ հիմնովին գյուղաշխարհի ազդեցություն տակ էր և հոգերանորեն էլ հիմնովին քաղաքի երգիչ չէր գարձել, այդ շրջանի նրա երգերում՝ «Մթնաշաղի անուրջներ»-ում, բայց մանավանդ զրանից էլ առաջ գրած-

բանաստեղծություններում որոշ չափով գծագրվում է դյուլական «արձակ ամայի գաշտերի» պեյզաժը, բառապաշարի մեջ էլ նշանաբերի է այսպիսի հոլովաճեր՝ մարդոց, մարդոցից, ծաղկոց, ծաղկունաց, հավք, մանկութև այլն։ Տերյանի բանաստեղծությունների երկրորդ գրքում, սակայն, վերանում է դյուլական պեյզաժը, և արդեն շատ ավելի շեշտուն ձեռվ է գծագրում քաղաքի պատկերը՝ «խենթ փողոցների» շարժումը, բուլվարները, կրկինները, Պետերբուրգի արքայական պալատները, ավտոմեքենաների շարժումը և այլն։ Տերյանի լեզուն էլ այդ երգերում խսպառ զաված է բարրասաւյին հոլովաճերից, այն, ինչ նկատելի էր նրա վաղ շրջանի երգերում։ Իր գործունեության վերջին շրջանում, սակայն, մեծ քաղաքի ժիոր առօրյայից հոգնած պոետը նորից մտքով թեադում է հայրենի սարերը, ուր ձայնում են իրար հովիվները, ուր մեղմախոս առուներն են երգում, ուր հայրենական տունն է գտնվում, ուր մայրն է նստած «շարժում է լիկը ձեռքին», օմանում ու հերիաթ է ասում։ (տես «Վերջին գաշնակը երգեալը»), Այսպիսով Տերյանի թե վաղ շրջանի և թե մանավանդ վերջին տարիների երգերում գյուղաշխարհը իրուն վերհուց է հանգես զալիս և ընդհակառակը, քաղաքը, քաղաքի արհյանքը ավելի կոնկրետ ու ավելի սեալ գծագրվում։ Նրա երգերի հիմնական օրինանը միշտ քաղաքն է մնում։

Տերյանի պոետիայի մեջ ուշագրավ տեղ են դրավում նաև հայրենասիրական երգերը, Բանաստեղծն իր այդ կարգի երգերը առաջին անգամ հրատարակեց 1915 թվին միայն, «Մշակ» լրագրում՝ «Երկիր Նախրի» խորագրով։ Այդ հանդամանքը առիթ է տվել մեր մի շարք քննադատների, որոնք հանգես զալով «Եաիրյան երգերի» լրայս տեսնելուց առաջ, հայտարարելու որ իրը Տերյանին չի հուզում մեր ժաղովրդի վիճակը, որ նա չի ապրում նրա կուլտուրական արժեքներով, նրան չի մտահոգում հայ ժողովրդի սերկան ու տպագան և այլն։ Տարածված այդ կարծիքը վաղուց ի վեր հերքել է ինքը Տերյանը թե իրու պոհու և թե իրու քաղաքացին Հանուն հայ կուլտուրայի, հանուն հայ գրականության հարստացման նա կամավոր կերպով հանձն առավ կրել նյութական ու բարոյական վկանքներ։

Զեմ գավաճանի ես իմ Նվարդին

Որքան էլ դյուլթես, օ՛, Շամիբամ,

• • • • • • • • •

Նվարդը հայ լեզուն էր հայ կուլտուրայի սիմվոլը։ Մեր ժողովրդը ընդերքից ելած Տերյանին միշտ և հանապազ տանջել է հայ ժողովրդի վիճակը սուլթանի ու շարի զաժան լծի տակ, «Ղարկված ու զրկված» հայրենիքի ապարախտ զավակների ծայրահեղ աղքատությունը թափիծով է պարուրել նրա հոգին։ Տակավին 1905 թվին, հսահակա-

նի հետ ունեցած մի սրտակից զբույցի ժամանակ, նայելով շուրջը-  
հավաքված համազուղացիներին, սրտի թառանչով բացականչել է  
Տերյանը. «Նայիր՝ ինչ տիսուր աչքեր ունեն մեր գյուղացիները, ինչ  
մտահոգ գեմքեր՝ արևով, անձրես այրված ու բովված: Ինչ դառն  
աղքատություն է կաթում վրաներից... Դարերի տառապանքն է խո-  
սում սրանց բերանուվ».

Ինչպես չսիրեմ, երկիր իմ կիզլած,  
Պարզված վերըստին սուրելին սուր սայր.  
Ինչպես չըսիրեմ — հեղությամբ լցված  
Դու, յոթնապատիկ խոցված Տերամայր...

Իր թե այս և թե բովանդակ ստեղծագործություններում արտա-  
հայտված թախիծով ու տխրությամբ է Տերյանը հարազատ հայ իրա-  
կանության թումանյանն իր ժամանակ այդ միտքն է հայտնել-  
«Ես գտնում եմ, — ասում է նա, — որ Տերյանի թախիծն ու երազները,  
մշուշն ու աղջամուղը խորթ չեն մեր երկրին ու մեր հոգուն: Ես  
եղել եմ էն երկնքի մոտիկ լեռնադաշտում, ուր ծնվել է Տերյանը, և  
կարծես թե նա լիքն է էն մշուշային թախիծով ու քնքույշ երազ-  
ներով, որ բնորոշում են մեր տաղանդավոր բանաստեղծի քնարը»\*:

Ի դեպ՝ Տերյանի մտահոգության առարկան է եղել հայ աշխա-  
տավոր ժողովուրդը միայն, և ոչ նրա միջից նրա քրտինքով առա-  
ջացած բուրժուազիան. «Շատ եմ սիրում իմ բարձրագայ հայրենիքը  
և նրա խոնարի ժողովրդին, որ աշխատամ ե ու երազում, տեքում ե  
ու երգում: Նույն միտքն է արտահայտված Տերյանի «Նախյան եր-  
գերի» միջ ևս.

Չըշացա լինդուն փառքիդ  
Սնցյալ ու հեն փայլով երբեք. —  
Սիրեցի հիզ, անքեն հոգիդ,  
Եվ երգերդ մեղմ ու բեկրեկ,  
Լեղճությունդ՝ խավար ու լուս,  
Աղոթքներդ՝ դառն ու ցավոս,  
Զանգակներիդ՝ զարկը՝ տիսուր,  
Եվ հյուդերիդ լույսերն աղոտ...

Տերյանի գեմոկրատիկ ոգու համար շատ բնորոշ է այս երգը. նա-  
շլացած չի եղել մեր նախնիների երեխնի «խնդուն փառքով», նա  
սիրել է ոչ թե սեպուհների, ազատների դաստակերտներն ու ապա-  
բանքները, այլ հյուզերը, այնտեղ ապրող շինականին ու ախուրաչյա-  
բանքները: այս հյուզերը, այնտեղ ապրող շինականին ու ախուրաչյա-

համեստա նայերուհուն իր «մեղմ ու բեկրեկ» երգերով:

Երբ պայմթեց առաջին իմպերիալիստական պատերազմը, ավելի  
ցավով ապրեց Տերյանը հայ ժողովրդի վիճակը, լավ իմանալով, որ

\* «Թումանյանը քննադատ», էջ 281:

«միշտ մի աղեա, մի վնաս» պիտի գար նրան անպակաս, Այդ ահով ցված իր «Նաիրյան երգերի» մեջ Տերյանը դառնորեն ողբաց ֆեռդալական թուրքիայի և իմպերիալիստական պետությունների կողմէց բյուր անգամ խոցված «արնաներկ Նաիրյան» երկրի և նրա ժողովրդի դառը վիճակը.

Տեսնում եմ ահա՝ գյուղերը մեր խեղճ,  
Եվ թում դեմքերն այն տիւրության սովոր,  
Իմ ժողովուրդը՝ անել վշտի մեջ,  
Երկրն իմ անբախտ և աղետավազ...

Իմպերիալիստական պատերազմի տարիներին էր, որ պոետը կանգնեց երկընտրանքի առաջ: Ինչո՞վ պիտի վերջանա աշխարհացունց այդ պատերազմը, ի՞նչ ապագա պիտի խոստանա այն մեր դժբախտ երկրի համար, ի՞նչ է սպասելու մեր ապերջանիկ ժողովրդին, նրա արքայական լեզվի ու դարավոր կուլտուրայի լինել չինչու հարցը ի՞նչ լուծում է ստանալու: «Երդյանք սա մի կուլտուրական պատմաշրջանի վերջն է, թե մի ամբողջ կուլտուրայի»: այդ վարանու հարցումը բանաստեղծորեն այսպիս է ձևակերպել Տերյանը.

Միթե վերջին պոետն եմ ես,  
Վերջին երգիչն իմ երկրի.  
Մանն է արդյոք, թե սի՞նջն է քեզ  
Պատել պայծառ Նայիրի:  
Ահով ահա կանչում եմ քեզ՝  
Ցոլա, ցնարք Նայիրի:—  
Միթե վերջին պոետն եմ ես,  
Վերջին երգիչն իմ երկրի...

Համաշխարհային պատերազմի շրջանում զրված մի այլ երգում նույն մթին կասկածն է պաշարում պոետին, այս անդամ արդեն ոչ թե հայ կուրտուրայի, այլ հայ ժողովրդի Փիղիկական գոյության, նրա լինել - չլինելու խնդրին վերաբերող, որ բանաստեղծորեն այսպիս է ձևավորվել Տերյանի մեջ.

Երկրը Նայիրի երազ հոռավոր,  
Գնած ես քնքույշ թագուհու նըման,  
Միթե ես պիտի երգեմ քեզ օրոր  
Եվ արքայական դնեմ գերեզման:

Այս մթին կասկածները ծնվեցին պոետի մեջ, որովհետեւ նա ալքով տհանում էր, որ պատերազմի անեղ օրերին հայ աղքայականները և բուրժուազիան երկիրը տանում էին գեալի կործանում:

«Ահա այսօր այդ մարդիկ խոսում են Հայաստանի մաս-  
սին... դուք, որ ժառանգ եք դարձել մեր հայրենիքին և երեք  
չեք գնահատել նրա հոգեղեն ավանդը, Բայց կանցնի այս արյունավի-  
ճանգեսը, որի մեջ դուք ինքնակամ ու ինքնակոչ թամադա եք դար-  
ձել, և կդա նորից տաժանելի ու չարքաշ աշխատանքի առօրեականը,  
և դուք, եկվորներ, նորից կփախչեք այնտեղ, ուր ձեր որկորն ավելի  
կուշտ է, ուր ձեր որջը ավելի տաք», զբում է Տերյանը.

Եհմ հավատում ճիշերին ձեր ցնծագին  
Եվ խանդավառ աղմուկներին այդ շփոթ.  
Գալունի մի թույն կեղեքում է իմ հոգին  
Եվ ձեր ևինդը սարսեցնում է, որպես բոթ:  
Ո՞վ է կանգնել պաշտպան երկրին իմ ավեր,  
Ո՞վ է թարգման մեր զարավոր տանջանքին...

Որմնք են ապա կորով ու հավատ ներշնչող այն ուժերը, որոնց  
վրա կռնթնած բանաստեղծը վերածնունդի պիտի կոչեր իր անկյալ  
երկրին ու ժողովրդին, այդ ուժը Ռուսաստանի պրոլետարական շարժ-  
ման հետ կապված հայ աշխատավորությունն էր և հայ առաջավոր  
մտավորականությունը, ասում է Տերյանն իր «Հոգեոր Հայաստան»  
հոգվածում: Այդ մտավորականության առաջին շարժերումն էր քայ-  
լում և ինքը՝ Վահան Տերյանը, Մեկ անգամ արդեն նշմարելով փո-  
թորիկներով ծնվելիք Հոկտեմբերի շունչը, բանաստեղծը կամաց կա-  
մաց մեզմիվ հնչող ողբերգուները փոխեց մեր ժողովրդի բախտորոշ  
ապագայի հավատով ներշնչող երկերի: «Արարատին» նվիրած իր  
ներքող երգի մեջ այդ հավատի շունչն է զգացվում.

\* \* \* \* \*

Հայոց արնոստ աշխարհի  
Հոգին ես դու անարատ  
Հուրը հար թող հրաւիրի  
Սեգ ճակատիդ, Արարատ:  
Դու, անխորտակ ապավեն  
Հրաճարակ մեր հոգուն,  
Կանգնիր, անկյալ ժողովուրդ,  
Եվ հավատան, և առկա.  
Կա քո վշտում վեհ խորհուրդ  
Եվ խաչվածին մահ չըկա.  
Պարզվիր պայծառ դեպի վեր,  
Ցոլա հրով անարատ.

\* \* \* \* \*

հնչպես տեսնում ենք, Արարատը Տերյանի այս բանաստեղծության մեջ մեր ժողովրդի անխորատակ հոգու սիմվոլն է, ինչպես Մեծ-Մասիսը Ալշանի «Մասիսու սարկեր» չափածոյում: Ավելի զորհու հավատի բանաստեղծական արտահայտություն է մեր երկրի «կենանուրող» ու որոտընդուած հարությունը՝ ավետող այսուտանավորը ևս—

Ամբակուռ է մեր հոգին գարերի զավակ՝  
Շատ ես տեսել երկիր իմ ավեր ու կրակի՝  
Շատ ես տեսել երկիր իմ ցավ ու արհավիրք,—  
Լաց է այստեղ տմնն երդ ու ողը ամեն դիրքի:

Բարբարոսներ շատ կդան ու կանցնեն անհետ,  
Արքայական խոսքը մեր կմնա հավետու  
Չի հասկանա ձեր համբն և ծուլ և օտար  
Տաճար է մեր երկիրը՝ սուրբ է ամեն քաք  
Եղիպտական բուրզերը փոշին կղառնան  
Արեի պիս երկիր իմ, կլաուիս վառման  
Արքես փյունիկ, կրակից կելնես, կելնես նոր  
Գեղեցկությամբ ու փառքով վաս ու լուսավոր:  
Սրբացիր սիրո իմ, ել հավատով առկուն  
Կանդնիր հպարտ, որպիս լույս, լառն է մեր կանգուն:

Ահա այս հայրենասիրական երգերով ևս Տերյանը կապվում է հայ այն բանաստեղծական զբականության հետ, որի հիմնական մոտիվներից է մշտարթուն հայրենասիրությունը: Հայրենիքը Տերյանի վաղ շրջանի երգերում ծննդավայրի հասկացողությունն էր ի գեմս Զավախտի, Գանձայի, հետագա տասնամյակներում՝ քաղաքականապես հասունացած պոետի համար հայրենիքի զաղաքարը ավելի ընդարձակից զառնալով արդեն «երկիր նայերիւն»: Իսկ ամենից վերջում Հոկտեմբերյան սեղուցիայի պատմաշրջանում հայրենիքի գաղափարը Տերյանի մոտ ծուլից, միահյուսվեց սոցիալիզմի գաղափարների հետ: Տերյանը, ինտորի, ժամանակ չունեցավ, նրան այդ հնարավորությունից զրկեց վաղաժամ մանր, երգելու ձևով աղային, բովանդակությամբ սոցիալիստական այդ նոր ու նոր հայրենիքը, բայց նրա քաղաքական հոսմոզումները այդ են վկայում: Նրա պրակտիկ պարտիական աշխատանքները այդ բանին են հանդում: Հայ հայրենիքի փրկության բախտը Հոկտեմբերյան սեղուցիայի հետ կապելու մասին է խոսում Տերյանը, երբ զրում է, «Մենք միշտ քարոզել ենք և այժմ էլ պիտի անդադար քարոզենք, որ հայ աշխատավոր ծովովրդի փրկությունը նույսատանի բանվորական և զյուղացիական խորհուրդների իշխանության հզորության մեջ է... միայն

Թուսաստանի բանվորական և գյուղացիական խորհուրդների իշխանության կարմիր զննդերն են, որ կարող կլինեն աղասություն ավետելու արյունաներկ երկրին<sup>\*</sup>: Թե՛ Նայիրյան երկրի, և թե՛ համայնքարդկության ազատությունը փրկարար Հոկտեմբերի մեջ տեսավ Տերյանը, զրա համար էլ այնպես լիաթոք երգեց ռեղեց ռեղուցիսայի կարմիր, արյունաբար ազատության դրոշը.

Քեզ եմ երգում, կարմիր,  
Արյունաբարը  
Ազատության դրոշ:  
Հարյավ հոգին իմ որբ,  
Հավետ հարյավ  
Յնձուն ու խենթ, որպես  
Մըրկահավ...

Դա մեծ ռեկացիայի ցայտն էր ընկած բանաստեղծի հոգաւմ:  
Այլպես եղբափակեց Տերյանն իր գրական վաստակը, այդ օդակով  
բոլորեց իր երգերի «Ռսկե շղթան»:

\* \* \*

Տերյանի ստեղծագործությունների մի կարևոր ածուն է նաև նրա թարգմանությունները: Խոսելով նրա այս կարգի ստեղծագործությունների մասին, պետք է նկատել հետևյալը: Տերյանի թարգմանական և ինքնուրույն ստեղծագործությունների մեջ կա մի ընդհանուր կապ: Նա թարգմանում էր այնպիսի պոետների այնպիսի երգերը, որոնց մեջ լուրմ էր իր հոգուց բխած նվազների արձագանքը: Եվ իսկապես Տերյանի ինքնուրույն բանաստեղծությունները կարդալուց հետո, եթե անցնում ենք նրա թարգմանություններին, արամազգությունների փոփոխությունն չենք զգում, և թվում է, թե նույն պոետի սրտի և մտքի դրական արտահայտություններն են և այդ թարգմանությունները, ապրումների հարապատության հետ միասին արտահայտչական միջոցների (լեզվի, ոճի, հանգավորման) նմանությունն էլ ակներկ է: Այդ երգերն էլ «Կնքված են իմ կնիքով», ակնեկարող է ասել բանաստեղծը: Որ հիբավի թարգմանություններ անեկարող է ասել բանաստեղծը: ապետիտների հարապատության հետ միասին արտահայտչական միջոցների (լեզվի, ոճի, հանգավորման) նմանությունն էլ ակներկ է: Այդ երգերն էլ «Կնքված են իմ կնիքով», ակնեկարող է ասել բանաստեղծը: Ապետիտներին էր ընտրում և ոչ պատահական Տերյանն իր սրտի մոտ պոետներին էր ընտրում և ոչ պատահական հեղինակներից թարգմանում, այդ առթիվ հետեւյալն է զրում Տերյանը: «Եվ սխալ եք, եթե կարծում եք, որ Բրյուսովը կամ մյուս ռուս պոետները (մենք կավելացնենք ինչպես և ինքը Տերյանը—Հ. Ղ.) թարգմանիչ մեքենաներ են, որ կթարգմանեն՝ ինչ որ տաք, այդպիսի մի ենթագրությունը նույնպես վիւսավորական է պոետի

\* Վ. Տերյան, հ. IV, էջ 339:

համար: Պոետը մեքենա չէ, ու նրա տրամադրությունների և ճաշակի վրա բռնանալը անվայելը\*: Այդպիսի հայացք և մոռեցում ունենաւ լով թարգմանությունների վերաբերյալ, հասկանալի է դառնում, թե ինչու Տերյանը հատկապես թարգմանել է Բրյուսովին, Վերենին, Հայնեին, ինչպես նաև Ռուսակելուն, Բոդլերին, Օսկար Ուալթին, այս վերջինների նկատմամբ էլ հարազատության սկզբունքը բացառված չէ:

Մեծ է Տերյանի թարգմանությունների նշանակությունը ոչ միայն իբրև բարձրարկեսա գործերի, այլ և այն տեսակետից, որ այդ կերպ Տերյանը լեզուներ չիմացող հայ ընթերցողին հնարավորություն էր տալիս հաղորդակեց դառնայ համաշխարհային գրականության հետ: Ի դեպքու ոռուս պոետներից Տերյանը ամենից շատ թարգմանել է Վ. Բրյուսովին հետևյալ երկու պատճառով: Տերյանը երախտապարս է եղել ոռուս պոետին, որն իր բարձրարվեստ թարգմանություններով և բարձր գնահատականով ներկայացրել է „Պօթազար Արմենու“-ն ոռուս հասարակության ուշադրությանը: Երկրորդ պատճառն այն էր, որ ոռուս սիմվոլիսմաններից Տերյանն ամենից ավելի մաս ու հարազատ է զգացել իրեն Բրյուսովին:

Ես գեռ պատանի սիրեցի քո խիստ,  
Ցուրտ, հյուսիսային մտազուսպ լեզուն  
Եվ տեսա՝ որքան ահեղ է կիղում  
Կըրտակը թագուն տողերից հանգիստ:

Դու չարչարանաց ահավոր ժամին  
Եկար այցելու իմ երկիրն անհույս  
Եվ ավետեցիր փրկություն ու լույս,  
Երբ հալածում էր մեր նավը քամին:

Այս երգի առաջին քառասողի մեջ, ինչպես տեսնում ենք, զարմանալի ճիշտ կերպով բնութագրված է Բրյուսովի պոեզիան և որ տվյալ դեպքերում կարեորն է, Տերյանը Բրյուսովի պոեզիայի նկատմամբ ունեցած իր սիրո մասին է խոսում, որ մզել է նրան թարգմանել այդ պոետին: Բրյուսովից Տերյանը թարգմանել է «Լինել մենակ», «Ժխուը երեկո», «Մենություն», «L'ENNUI DE VIRE», «Քաղաքին» ներբողը, ինչպես նաև «Անառակ որդի», «Հուշերի ժամ», «Օրհնություն», «Օրորոցի երգը», «Փախուստը» և էլի ուրիշ բանասեղծություններ. Բրյուսովի «Լինել մենակ» երգը Տերյանի թարգմանությամբ հնչում է այսպես.

\* Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հատ. 14, էջ 263:

Գովազմ է դեմքըս հողմը քնքույշ,  
Ամպերում հանգավ հուրը կարմիր,  
Եվ նորից ահա—մեղմ ու անուշ  
Իջավ երեկոն, փռվեց անծիր...

Ինչպես տեսնում ենք թարգմանական այս երգերում և Տերյանի ինքնուրույն բանաստեղծություններում մեր վերն ասած տրամադրությունների հարազատությունն ակնբախ է և միաժամանակ Տերյանն իր ինքնաստեղծ երգերի պատրանքն է ստեղծել այդտեղ ընթերցողի մեջ: Գալով ուրիշ ուսւա պոետներից Տերյանի կատարած թարգմանություններին, ինչպիսիք են՝ «Իմ նվազների ձայնը գինախոս», «Աւել երկրում հեռավոր ու դյութական», «Նայիր աստղն է ցոլում վրաս», «Դուռըդ բաց ու գնա», «Միրտու կեղեքված է» և ուրիշները, նույն տերյանական պոեզիայի պատրանքն են առաջ բերում ընթերցողի հոգում: Ինչպես արդեն նկատել ենք, ոստական պոետների հետ միասին, Տերյանը մի քանի սքանչելի թարգմանական նմուշներ է տվել նաև համաշխարհային լիրիկներից, իր հոգեհարազատ Հայնեից՝ երազների և սիրո կախարդ երգչեց. Հայնեից Տերյանը բավական շատ բան է թարգմանել՝ մոտ 26 ոստանավոր, դրանց մեջ է նաև «Ճանապարհորդություն» գեղալի կեվլար» բալլար, «Լիրիկական ինտերմեցիյից», «Շեղվիքի ջունակները», «Դու որպես հեռու լեռների շուշան», «Ասա, ուրէ է քո սիրածը սիրուն», «Մի եղննի է կանգնած միայնակ» և ուրիշները, բայց հնարավոր է համարել «Տպագրյալ գրին» հանձնել ոչ բոլորը. թե ինչքան խստապահանջ էր Տերյանը իր ոչ միայն ինքնուրույն, այլև թարգմանական բանաստեղծությունների նկատմամբ, այդ երկում է նրա ստեղծագործական լաբորատորիայից. նույնիսկ մի անդամ տպագրած երգը նա հետաքայում նորից ու նորից նիսկ մի անդամ տպագրած երգը նա հետաքայում նորից ու նորից վերամշակման էր ենթարկում. «Թեթև չէր նրա արվեստը խնդուն»: Վերամշակման մեջ Տերյանի թարգմանությունների մասին, Քանի որ այժմ խստում ենք Տերյանի թարգմանությունների մասին, ուստի այդ հանգամանքը ապացուցող փաստերը վերցնենք Տերյանի կատարած թարգմանություններից, օրինակ Վերլենից: Վերլենի «Աշնան երգ»-ը վեց վարիանտ ունի. միևնույն բանաստեղծությունը Տերյանը վեց անգամ փորձել է թարգմանել և երբ համեմատում ենք նրա «Աշնան երգ»-ի թարգմանության առաջին և վեցերորդ փորձը, ակնհայտ է դառնում այն, թե ինչքան է շահում թարգմանությունը համառ ու ակական ստեղծագործական մշակումից:

Վահան Տերյանի չափածո թարգմանությունների մեջ խիստ ուշագրավ տեղ է բռնում նաև Շոթա Ռուսթավելու «Ընձենավորը»: որի 12 տունը (48 տող) միայն հասրավորություն ունեցավ թարգմանանել պոետը, բայց այնպես, որ Մատի նման խստապահանջ գիտնականը համարել է այն «Արեի կտոր» թարգմանական գրականության մեջ: Խիստ հետաքրքրական է, թե ինչպիսի է ծագել «Ընձենավոր»-ի

թարգմանության միտքը բանաստեղծի մեջ՝ Մոսկվայում ուսանող եղած ժամանակ Տերյանը ներկա է լինում Ակադեմիական թերեթելու Մոսկվա գլուխ առթիվ վրաց ուսանողների կազմակերպած հանդիպման երեկոյին։ Այդ հանդեսին ներկա գոնվող մի ոռւս ժուռնալիստ մոտենալով Տերյանին հարցըրել է. «Ի՞նչո՞վ է բացատրվում այս անօրինակ սերը դեպի մի պոետ։

— Զգիտեմ, — սասացի, գրում է Տերյանը իր հուշերում, և առաջին անգամ կյանքում ինձ շատ վատ վագացի վրացերեն չիմանալու համար, որովհետև ևս չգիտեի անգամ, թե ի՞նչ է գրել Ծերեթելին։ Ի՞նչ կարող էի պատասխանել հարցաւը ոռւսին, որը գիտեր, որ ես հայ եմ, բայց հավատացած էր, որ ես պիտի լավ ճանաչեմ վրացիներին և իրավացի էր իմ ծանոթ ոռւսը, սպասելով, որ ես ավելի տեղյակ կլինեմ մեր գարավոր հարկան մոտեի մի ժողովրդի կյանքին ու գրականությանը։ Սակայն քանի հայ կարող է պարձենալ մի այդպիսի գիտությամբ\*, ինարկե քչերը, սակայն այդ քչերից էլ առաջինը Տերյանը։ Ամոթի գգացումը վրացերեն չիմանալու համար Տերյանին հարկադրում է սովորել այդ լեզուն, ուսումնասիրել այն գիտականորեն, թե ի՞նչպիսի գիտական հոգնատանց աշխատանք է կատարել Տերյանը, այդ մասին վկայում է նրա ուսուցիչն։ Մառը՝ կատարելապես տիրապետելով վրացերենին, Տերյանը թարգմանում է նույն Ծերեթելու «Մի կինտո եմ գարգիմանդ» բանսատեղծությունը, իսկ Պետերբուրգում՝ Մառի ուսանողը եղած ժամանակ ձեռնարկում է «Ընձենավոր»-ի թարգմանության գրում։ Այդ սաքանչելի ուսմանտիկ պոեմը գրավում է մեր սիրո երգչին, իսկ որոշ հոգեհարազատությունը՝ խթանում Տերյանին թարգմանել այն ընտելի հայկական լեզվով, ինչպես վկայում է Մառը, նախքան «Ընձենավոր»-ի թարգմանությանն անցնելը, նա ուսումնասիրում է պոեմի, Մառի կողմից գիտականորեն վերականգնած տեքստը, բայց թարգմանելիս Տերյանը մոտենում է այդ երկին ոչ որպես գիտնական, այլ որպես պոետ, այսինքն, «Ընձենավոր»-ի գիտական տեքստից չի թարգմանում, այլ տարածված այն ավանդական բնագրից, որ բարձր գեղարվեստական հաճույք է պատճառել վրաց ժողովրդին, «և հավատարիմ իմ միտումին, — գրում է Մառը, — թարգմանել երկը այսին, ինչպես որ կա և ինչպես կենցաղի մեջ հասկացել են այն՝ Տերյանը խուսափում է անվիճելի և ֆիլոլոգիապես հաստատված մեկնությունից և թարգմանում է անանցած ձեռվու։ Այդ կերպ վարվելով՝ գեղարվեստական բարձր հաճույք պատճառելու նպատակ էր ունեցել Տերյանը, որին և հասավ թարգմանիչը։ «Տերյանի թարգմանության մեջ կա ինչ որ հրապույր, և այդ է, որ ընթերցանության պահին, ասում է Մառը,

\* Ակտակի Ծերեթելի, Մառկա, հ. IV, էջ 240—241.

ստեղծում է մի պատրանք՝ թե Տերյանը չէ հայերեն բանաստեղծում, այլ ինքը Շոթառնա\*։ Ասում են, թե „*«* ուզու լուսական պատրանք է մասցի ինչպես «Ընձենավոր»-ի տեքստին, այնպես էլ այլ թարգմանությունների մեջ, բայց և չի դավաճանում թարգմանվող հեղինակին։ Լավ իմանալով, որ բանաստեղծի համար մի բառը մի աշխարհ է, Տերյանը ոչ միայն խաղ չի արել բառերի հետ, այլ այնպիսի խիստ ընարությամբ է գործածել յուրաքանչյուր բառը, որովեալի չինի թե գործածած բառը թուլացնի երդչի ասելիք միտքը, խախտի վանկերի հավասար քանակը տողի մեջ, թուլացնի հանգերը, զրկի պոեմը երաժշտականությունից և, վերջապես։ Տերյանը միշտ աշխատել է պահպանել իր թարգմանության մեջ նույնթափելու պօնմի ընազրի ոգին ևս։ Այդ ամենն անելու համար տաղանդի հետ հարկավոր էր նաև ստեղծագործական համառ ու տեական աշխատանք կատարել, այդ էլ է արված եղել։ «Ընձենավոր»-ի նախերգի 12 տունը Տերյանը թարգմանելէ 1914—17 թվերի ընթացքում։ Ստեղծագործական դադարներով, որի հետեւնքով հնարավորություն է ունեցել «հեռանալ», «խորթանալ» իր թարգմանության նկատմամբ և օտարի, քննադատի աշքով նայել երկին, սուրեկալիվ մոմենտը վանելով իրենից։

\*

\* \*

Տերյանի պոելիայի ուշագրավ կողմերից մեկն էլ նրա արվեստն է։ Տերյանը մեծ ուշագրություն դարձրեց իր երգերի նվագայնության վրա և հոբինեց այնպիսի բանասահմանություններ, որոնք իսկապես կրածտական արամագրություն են առաջ բերում ընթերցողի հոգում։ Երաժշտական արամագրություն են առաջ կարող հայություններ, որի հետեւնքով հնարավորություն է ունեցել «հեռանալ», «խորթանալ» իր թարգմանության նկատմամբ և օտարի, քննադատի աշքով նայել երկին, սուրեկալիվ մոմենտը վանելով իրենից։

Աշնան մշուշում շնորհ ու շրջուն,  
— Բարդիներն են բաց պատուհանիս տակ, —  
Դու ես, որ դարձալ թախիծով հիշում,  
Կանչում ես նորից կարոտով հասակ։  
Անտես ու հուշիկ իմ շուրջը շրջում,  
Եվ շնչում ես, և անուշ շրջում,  
Պայծառ տրամությամբ ինձ ես անըջում  
Ու գաղտնի սիրով սիրում ու հիշում։

Տերյանն այստեղ հրապարակ է հանել հայ լեզվի ընձեռնած

\* «Նորք», 1922 թ., գ., Ն. Մաս, «իմ ուսանող Վ., Տերյանի հիշատակին», էջ 124.

ողջ երաժշտական հնարքավորությունները։ Տերյանի ինչպես այլ այնպես էլ այս ոտանավորը սոսկ հնչյունների խաղ չէ, այլ ճշմարտապես տրամադրում է մեզ կենցանի տպավորություն ստանալու պատուհանի տակ շնկացող բարդիներից։ Բանաստեղծությունը կարդալիս զգում ես մեկի հուշիկ քայլերը գետնահար տերմաների վրայով, վերջիններիս հատուկ բնաձայնի հանգիտությամբ։ Տերյանի երգերի այս նվազայնությունը դյուժել է մեր կոմպոզիտորներին և մղել նրանց ձայնազրել նրա երգերից մի քանիսը։ Մեծ ուշադրություն դարձնելով իր բանաստեղծությունների երաժշտականության վրա, այնուամենայնիվ նա վերլենի, բայլմոնտի և այլոց նման ծայրահեղությունների մեջ չի ընկեր թերագնահատելով բանաստեղծական խոսքը և պատերը որպես մարդկային ապրումների և հույզերի արտահայտման զորեղ միջոց։ Եթե նվազայնությունը համարենք Տերյանի պոեզիայի մեջ համեմատաբար առաջատարը, ապա պիտի ավելացնել, որ պատերավորությունն էլ ըստ ամենայնի էպիգոդիկա բնավորություն չի կրում նրա ստեղծագործություններում։ Թեև Տերյանի պատերներները գունեղ ու վառ չեն, ինչպես իսահակյանինը կամ Թումանյանինը, բայց և այնպես զրանք փայլում են ինքնուրույնությամբ։ Տերյանի պատերավորության մեջ առկա է զինամիզմի մոմենտը։ Նրա այդպիսի շարժում ու ընթացք արտահայտող պատերավոր երգերից են՝

Քո մազերի ցնորական փայլը պայծառ  
Ժայռից իջնող ջրվեժի պես առատահու,

#### Կամ

Ու թեթև թվաց կյանքս երկրային,  
Որպես առվակը սարերից իշնող,  
Որպես ամպերի շարքը ոսկեղեն  
Գարնան արեող երկնքում չվող։

Երաժշտականության ու պատերավորության հետ միասին Տերյանը մեծ ուշադրություն դարձեց իր ոտանավորների տպաչափության (մետրիկայի) վրա հասցնելով այն կատարելության։ «Տերյանը, —զրում է Բրյուսովը, —փորձ արեց սեփականել հայ պոեզիայի այն ամենը, ինչ ձեռք էր բերել ելքոպական պոեզիան (առանձնապես ռուսական և ֆրանսիական) վերջին տասնամյակների ընթացքում։ Այսպես, Տերյանը շոշափեց թեմաներ, որոնք առաջ դուրս էին մնում հայ պոեզիայի տեսադաշտից, փորձում էր հայկական ստանավորի մեջ նոր ոիթմներ, բացառիկ խստությամբ վերաբերվեց գեպի ոիթմը»\*։

Տերյանի բանաստեղծությունների տաղաչափության մասին

\* „Պօэзия Армении“, В. Брюсов, Москва, 1916 г.

խոսելիս Իսահակյանն ևս շեշտում է այն, որ Տերյանը հայկական ոտանավորի մեջ փորձում էր նոր ուժիթմներ:

«Ենդունված կարծիք է,—գրում է նա, —թե հայկական տաղաչափությունը սիլարիկ է, վանկային, ոռմանական լեզուների նման, հիմնված վանկերի քանակի վրա։ Սակայն սա ճիշտ չէ։ Ճշմարտությունն այն է, որ մեր լեզուն օրդանապես ունի և հնարավորություններ՝ շեշտական ոտանավորներ ջրելու։ Եվ արդեն հայ հին բանաստեղծները շատ հաջող և միշտ էլ կիրառել են յամբը (մեծավերջ), անապեսուր (վերջատանջ) և չորրորդ պեոնը (քառավանկ վերջաշեշտ), հազվադեպ կերպով՝ դակարիլ (ստեղն) ամֆիբրալիք (քողազոտ) և մյուս պեոնները, որովհետև մեր լեզվի բառերը թույլ չեն տվել՝ դրանց գործածումը, այդ չափերը կերպանկալող բառերը շատ քիչ են մեր բառարանում, սակայն Տերյանը ճակատի քրամինքով կարողացավ գտնել այդ բառերը, ընտանի գարձնել, կիրառեց զրանք և տվեց նրանցից հաջող, գեղեցիկ նմուշներ»\*։

Տերյանի այսպիսի նոր չափերով գրված ոտանավորներից են՝ Ամֆիբրաքոս-քողազոտ (հարաշեշտ եռավանկ բառերով):

Կարծեն /թե դարձել եմ/ ես տնեն

Բոլորն /առաջվանն/ է կը կեն,

Կը կեն /դու հին/ տեղը նըստում,

Շարժնեմ ես իլլկը մեր հին։

Շեշտադրության ոչ մի անկանոնություն չկա այս ուժեղ, ուժ-միկ երգում։

Դակարիլ (ստեղն) եռավանկ բառական ոաքերով սկիզբը դորեղ շեշտում։

Դուրսը մայիսն է, արբած,

Դուրսը խնդնեմ ու աղմուկ։

### Կամ

Նույնն է հասցեն հնամյամ.

Նույնն է՝ օթելը «Պարիժ»։

Սահմանափակիելով այս օրինակներով, պետք է նկատել, որ տաղաչփության բնագավառում ևս Տերյանը մեծ հետք թողեց մեր պոեզիայի մեջ, հարստացրեց չափածո խոսքի սիթմը, բացի այդ, Տերյանը մեր պոեզիայի մեջ երգերի նոր ձևեր ըերեց (արիոլետներ), ինչպես նաև կատարելագործեց սոնետի, զաղելի տեսակները։ Ի դեպ՝ Տերյանի երգերի մեջ կարելի է գտնել նաև տերցիներով գրված ոտանավորներ—եռատող տներից կազմված, ուր առաջին և երրորդ տողերը նույնահանգ են, իսկ երկրորդը՝ անհանգ։

\*\* «Գրական թերթ», 1945 թ. № 1, Ա. Իսահակյան—Վ. Տերյան։

Զեռներում Զեր մարմարյա  
Ոսկեցոլք Զեր աչքերում  
Ես գերի եմ հնօրյաւ

Երբ տերցիններով զբած երգը կաղմած է լինում մի շարք  
նմանապիսի եռատող աներից, այն գեպքում երկրորդ եռյակի առա-  
ջին առղջ հանդակից է գառնում նախորդ երկրորդ առղին:

Իր գրական գործունեության վերջին շրջանում ընդհուպ մոտե-  
նալով սևոլուցիային, Տերյանը գիտակցեց, որ նոր բովանդակու-  
թյուն արտահայտող երգերը պահանջում են նոր ձևեր: Քաջ գիտակ-  
ցելով այդ բանը, մեր բանաստեղծը որոնում էր նորանոր ձևեր և  
պետք է ասել, որ որոնածը գտնում էր, դոնե այդ են ասում նրա  
սևագիր անվարտ ոտանավորները (աես «Քեզ եմ երգում կարմիր  
արյունաբորք աղատության գրոշ» երգը):

Ինտերվենտների գեմ գրած իր այդ շրջանի երգերում Տերյանը  
փորձել է նաև հրապարակներում արտասանելու համար կենդանի  
խոսքին մոտեցող ձևերով երգեր ևս հօրինել, որոնք հեռվից հեռու  
հիշեցնում են Սայակովսկու ոտանավորները՝

Մեր թշնամին ըերում է «տանկեր»,  
Բերում է ցեղեր սևամորթ...  
Կեռ զաշույններով գալիս են,  
Մոայլ դնդերով գալիս են  
Թող գան.

Թող գան,

Թող գան:

Տաղաչափական ձևերի և հանգերի հետ միասին Տեր-  
յանը արտակարդ խնամք տարավ նաև իր բանաստեղծական լիդվի-  
նկատմամբ: Նրա երգերի մեջ, մանավանդ վերջին շրջանի, բարբառի  
հետք չկա, մաքուր գրական հայերենն է և երբեմն միայն համե-  
մում գրաբարյան բառ ու ձևերով, որ դասական ոճի պատրանք է  
հարուցում ընթերցողի մեջ: Տերյանի բանաստեղծական լեզուն զար-  
դացել է «Հյուսիսափայլ»-ի շրջանի բանաստեղծների (Շահազիզի, հե-  
տագայում և Հովհաննիսյանի) կերտած գրական լեզվի բաղայի վրա:  
Տերյանից հետո ոճական վայելչության պահանջը այնքան ուժեղա-  
ցափ, որ արդեն հնարավոր եղափ ժամանակակից քաղաքային հողե-  
րանություն ունեցող մարդու ամենաբարդ ու նուրբ ապրումները  
վերաբարդրել այդ լեզվով:

## ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ԿՐԱՄ ԳՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դալով Տերյանի կրած զբական ազգեցությունների խնդրին, պետք է նկատե՛, որ բանաստեղծի տնցած գրական ուղին որոշ իմաստով հարթել են հայ պոետներից Դուրյանը, Խանհակյանը, Դեմիքճյանը, Ակսենք Դուրյանից: Մեր հիշյալ երկու բանաստեղծների սոցիալական էռոթյան, գրական ուղղություն, գրական փորմայի, արտահայտչական պրիմիսերի, թեմատիկայի մեջ կա ընդհանուր հարազատություն, որ գրական ազգեցություններն ապահով կարենոր տվյալ է: Գալով Տերյանի և Դուրյանի աշխարհայեցողության ու աշխարհը բռնձանը՝ պիտի ասեն, որ մեր երկու պոետների ստեղծագործություններում էլ երևան է գալիս նրանց փիլիսոփայության հիմքում ընկած դուալիզմը: Բացի իրական օբեկտիվ աշխարհից, մեր պոետների համար միաժամանակ գոյություն ունի նաև բնազանցական աշխարհը, իրական աշխարհը Դուրյանին միշտ տաղառուկ է թվացել. «Ճագերու մեծ մայր է աշխարհ», հայտարարում է նաև Տերյանը նույնպես արտնջում էր այս աշխարհից և ձգուում «Երկիրն» «անցավ ու անհուշ». Երկնային աշխարհի գոյության հավատքը ակնհայտ է Տերյանի մեռած բառեկին նվիրած և Դուրյանի Վարդան Լուֆթյանին ձոնված երդերում: Նմանություններ կան նաև Դուրյանի և Տերյանի երգած մոտիվներում՝ սիրո, մենության և բնության երգերում: Իրական կինը չէ ամոքել Դուրյանի վիշտը Նրա սիրո օրեկաը լքել է իրեն և պատճառ դառնել այսպիսի տողերի հորինման:

Ոչ ոք ըստավ—հեգ տղա,  
Արդյոք ինչու կը միա,  
Թերեւս ըլլա գեղանի,  
Թե որ սիրեմ չը մեռնի,

Եթե իրական կինը, իր բոլոր բարիքներով ու թովությամբ մատչելի չի եղել Դուրյանին, ապա Տերյանը, որ վայելել էր աշխարհ հիկ կնոջ սերը, բայց չգտնելով նրա մեջ սինթեզը՝ կինը—մայր, կինը քոյլը և կինը կին, հիասթափվել էր իրական կնոջ սիրուց և կինը քոյլը և կինը կին, հիասթափվել էր փնտրում վերոթվյալ բոլոր հատդրյալ «ցնորք» աղջկա մեջ էր փնտրում վերոթվյալ բոլոր հատդրյալ դուռը:

Սիրո երգերից հետո գալիս են մենության երգերը: Գանձայից նետված լինելով արդյունաբերական վիթխարի քաղաքը՝ Մոսկվան, Տերյանն իրեն զգում էր մենակ մեծ քաղաքի ժխոր առօրյայի մեջ, տեսնում էր «բարդ մարդիկ», պաղ դեմքերով, որոնցից հեռանալ էր պատճեն զգում նաև Դուրյանը 60-ական—70-ական թվառում: Նույնն էր զգում նաև Դուրյանը 60-ական—70-ական թվառում:

անդրագարձել է իր ստեղծագործություններում մահվան մոտիվներին: Տարաբախութեագայն էլ զգացել է այդ ախտի գորավորությունը, որն «աստղում էր ննջել առնավետա»: Դուքյանի և Տերյանի միջև գոյություն ունեցող ստեղծագործական վերօնիշյալ հարազարությունն անհետեանք չի մնացել վերջինին համար: Նախորդ ունենալով՝ Դուքյանին, Տերյանն օգտագործել է նրա գրական կուլտուրան: Տերյանն ուսանել է իր նախարդի բանաստեղծական արվեստի առանձնահատկությունները: Երաժշտականություն, բանաստեղծական լեզվի կուլտուրա և այլն:

Տերյանի բանաստեղծական գործի վրա ավելի լուրջ աղդեցություն է ունեցել Իսահակյանը: Նրա վաղ շրջանի բանաստեղծությունները (գրված 1903—1906 թվականներին) թե՛ իրենց բովանդակությամբ և թե՛ կառուցվածքով՝ նմանողական գործեր են և կրում են Իսահակյանի նկատելի ազգեցությունը: Նրա այդպիսի բանաստեղծություններից հիշենք «Երգը» և «Արթշները»: Որոնց մեջ նկատվում է Իսահակյանի շունչն ու բառապաշարը, արտահայտչական եղանակները և այլն (Հավք, թաց, բնողարած, վերք և այլն): Տերյանի և Իսահակյանի մեջ կա նաև հոգերանական վիճակների զարմանալի նմանություն: Նրանք երկուսն էլ «ատարադիր թուզուններ» են «մատնված փոթորկին, ծովերում անծանվել» որպես «մենաւոր» ու մոլոր մի նավակի»: Երկրային սերը չի ամոռում նրանց: Իսահակյանն իրական կնոջ համբուլյորի մեջ թույն էր անսուռմ, փախչում նրանից: Տերյանի ալիրության ազրյաւըն էլ կնոջ սերն է: Արձակ, ամայի զաշտերի միջով մի ազջիկ է անցել և տիրությամբ համակել բանաստեղծի հոգին (տես նրա «Ճիրություն» ուսանավորը): Իր մենանալու, առանձնանալու արամագիւթյուններով էլ Տերյանը նման է Իսահակյանին: Հիշյալ հանգամանքներով կարելի է պատճառաբանել Տերյանի՝ Իսահակյանին աշակերտելու խնդիրը. նայ հայ բանաստեղծներից ամենից ավելի կապվում էր Իսահակյանի հետ: Եվ բնավառության ականական երեսություն է այն, որ վաղ շրջանի Տերյանը ուսուցչության էր կանչում Իսահակյանին հանձնելով իր ուսանավորները նրան խմբագրելու «Ձեր կարծիքն ինձ համար ծանրակշիռ է. եթե չեք հավանի որեւէ ուսանավորի, չեմ տպիչ, զրում է իր նամակներից մեկում Տերյանն Իսահակյանին: Այսպիսով Իսահակյանն էր և ավելի քան որևէ մեկը, սկսնակ Տերյանի համար կղել է ուղի նշող: Սակայն Տերյանն իր ստեղծագործություններով որոշ չափով մոտենակային Տերյանն իր ստեղծագործությունների թեմատիկայով, այնպիս էլ ինչպես իր բանաստեղծությունների թեմատիկայով, այնպիս էլ նրանց կատարման արվեստով: Ռուս պետոններից Տերյանն ամենից ավելի իրեն մոտ էր զգում Բրյուսովին:

Ես զեռ պատահնի սիրեցի քո խիստ  
Ցուրտ, հյուսիսային մատաղուստ լեզուն,  
Ես տեսա՝ որքան ահեղ է կիզում  
Կրակը թաքուն տողերից հանգիստ:

Տերյանի համար Բըյուավի ստեղծագործությունները հիմնակա-  
նում ուսանելի են եղել իրենց բազմազան ու նորանոր ձևերով ու  
չափերով: «Մենություն» բանաստեղծության թարգմանության մեջ  
Տերյանի կողմէց կիրառած նոր չափը նույնպես պիտի համարել գրա-  
կան ուսումնասիրության արդասիք: Բըյուավի, Բլոկի նման Տեր-  
յաննել քաղաքի պեյզաժը հարմարեցնում էր իր թախծոտ արամագը-  
րություններին: Տերյանի մոտ էլ մեծ մասամբ քաղաքի գեմքը թաք-  
ուղիած է լինում մշաւի մեջ: Անընդհատ մաղթող անձրեկի կաթել-  
ները բանաստեղծը համեմատում է պաղ արցունքների հետ, ասես  
երկինքը համրորեն լաց լինելիս լինի քաղաքի վրա: Տերյանի գրա-  
կան ուսումնասիրությունը չի սահմանափակվում նաև ուսումնական  
ոլողիայի շրջանակներով: Մեր բանաստեղծը (ինչպես վերոհիշյալ  
ուսս պոետները) հաղորդակից է դառնում ֆրանսիական պոետ-  
ների՝ Վերլենի և այլոց ստեղծագործություններին: Տերյանը փորձում  
է հայացնել նաև Վերլենին: Դրան օգնում էր այն հանգամանքը, որ  
Տերյանը տակավին կաղարյան ճեմարանի սան եղած ժամանակաշրպ-  
ջանից տիրապետում էր Փրանսերենին և կարգում էր Վերլենին  
բնագրում: Տերյանն իր գրական ուսումնառության շրջանում մեծ  
ուշադրություն էր դարձնում վերլենյան պոեղիայի նվազուն կողմի  
վրա, տալով իր հերթին կատարյալ երաժշտական գործեր: Բայց նա  
Վերլենի նման ծայրահեղությունների մեջ չի ընկել, թերագնահա-  
տելով բանաստեղծական խոսքը և պատկերը որպես արտահայտչական  
զորեղ միջոց (հիշենք Վերլենի «Romanes Sans paroies Art poétique»):  
Իր գրական ուսումնառության ընթացքում, մասնավորապես ուսակ-  
ցիայի տարիներին, Տերյանը սիմվոլիզմի ազդեցության տակ էր:  
Այդ շրջանի նրա ստեղծագործությունները քննադատելի ու խոցելի  
են իրենց մշուշապատռությամբ, միստիկայով և հուսահատական արա-  
մագրություններով: Սակայն ուսուական և եվրոպական սիմվոլիստա-  
կան գրականության ազգեցությունը կամաց կամաց վերանալ է  
սկսում Տերյանի երգերում, երբ նա «կախարդական շղթայից» անց-  
նում էր ուսուցիչայի կողմը: Այս շրջանի Տերյանը մոտենում է վաղ  
շրջանի Գորկուն: Այս շրջանի Տերյանն արգեն այլ մոտենում ու  
վերաբերմունք էր ցուցաբերում նաև ուսս սիմվոլիստների նկատ-  
մամբ: «Հոր ու գիտուն» համարելով Սոլոզուբին և Խվանովին, Բնու-  
րուշ է և այն, որ այս շրջանի Տերյանը թարգմանություններ էր կա-  
տարում ու ներշնչվում «Չուրբակներ»-ի հեղինակ Հայնեցից: Ճիշտ է,  
Տերյանը ժամանակ չունեցավ դառնալու ուսուցիչի երգիչը, ոյդ

Հնաբավորությունից զրկեց նրան մահը: Բայց Տերյանն ապահովար կրեց ուսուցիչն օրերի գրավոր ազգեցությունը և ապա լիաթոք երգեց «կարմիր արյունաբարբ ազատության գրոշը»: Դա մեծ ուսուցիչի շայտն էր ընկած բանաստեղծի հոգւմ: Այդպիս եզրափակեց Տերյանը իր գրական վաստակը: Այդ օդակով բոլորեց իր երգերի «Ոսկե շղթան»:



Պատ. իմբագիք՝

Հ. Մ Կ Բ Տ Ց Ա Ն

ԳՖ 02986

պատվեր 113

տիրաժ 2000

Յ<sup>Յ</sup>/4 ապագր. մամուկ. 5<sup>1</sup>/Յ հեղ. մամուկ

Հանձնվել է արտադրության 1947 թ. ապրիլ 15-ին  
Ստորագրված է տպագրության 1947 թ. օգոստոսի 13-ին

Հայկ. ՍՍՓ Պետական Հեռակա Մանկավարժական Ինստիտուտի տպարան,  
Երևան, Տերյան փող. № 127

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220031097

(704)

ԳԻՆԸ 7 ԱՌԵՔՆԵ

